

## Ֆրանսայի Դեսպանի Կարծիքով՝ Պատմութեամբ Եւ Մշակոյթով Հայաստանը Եւրոպամէտ Երկիր Է

Նկատի առնելով վերջին զարգացումները՝ Եւրոպական Միութիւնը եւ Հայաստանը որոշած են վերանայիլ իրենց միջեւ համագործակցութեան հիմքերը: Այս մասին յայտարարած է Հայաստանի մօտ Ֆրանսայի արտակարգ եւ լիազօր դեսպան Անրի Ռէնօ, փետրուար 11-ին «Հայաստանի ձանապարհը Դէպի Եւրոպա. խոչընդոտներ եւ Հնարաւորութիւններ» թեմայով քննարկման ժամանակ:

Դեսպանի կարծիքով՝ երկար տարիներէ ի վեր Եւրոպական համագործակցութեան թեման արդիականութիւն կը վայելէ, եւ այս ուղղութեամբ բաւական չափեցած աշխատանք տարուած է:

«Հայաստանի նախագահի 2013-ի Սեպտեմբերի 3-ի յայտարարութիւնը փոխեց իրավիճակը: Այնուհանդերձ, ԵՄ-ի հետ բոլոր հնարաւոր ոլորտներուն մէջ յարաբերութիւններու խորացումը ու զարգացումը Հայաստանի արտաքին քաղաքականութեան օրակարգին վրայ են», - ըսած է դեսպան Ռէնօ, ու աւելցուցած որ,



Ֆրանսայի արտակարգ եւ լիազօր դեսպան Անրի Ռէնօ

ձիշդ այս ոգով Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան հանդէս եկաւ Փրակայի մէջ՝ Զեխիա կատարած վերջին այցի ընթացքին:

«Ֆրանսան երբեք չէ դադարած այս ճանապարհին վրայ աջակցել Հայաստանին եւ կը շարունակէ աջակցութիւնը», - ըսած է դեսպանը աւելցնելով, որ իր պատմութեամբ եւ մշակոյթով Հայաստանը եւրոպամէտ երկիր է:

## Համագաղութային Զօրակցական հաւաք ի նպաստ Սուրիահայութեան



Գերշ. Արմաշ Եպս. Նալպանտեան

Երկուշաբթի, փետրուարի 10ին, Երեկոյեան ժամը 7ին, աւելի քան 400 հայեր ներկայ գտնուեցան Պըրպէնքի Առաջնորդարանի «Գալայճեան» սրահին մէջ: Համագաղութային սոյն միջոցառումը զօրակցական հաւաք մըն էր, որուն իրենց մասնակցութիւնը բերին գաղութի հայկական բոլոր յարանուանութեանց հոգեւոր առաջնորդներն ու տարբեր կազմակերպութեանց ղեկավարները, ինչպէս նաեւ մեծ թիւով սուրիահայեր:

Հանդիսավար Սոնա Մատարեանի խնդրանքով ներկաները շուրջ տասը վայրկեան յոտնկայս հետեւեցան քաղաքացիական կռիւներու հետեւանքով Սուրիոյ տարբեր շրջաններու եւ հայկական կառույցներու կրած վնասներու



Տօթ. Գրիգոր Ատանալեան

տեսներիցի ցուցադրութեան, «Տէր Ողորմեա» երաժշտութեան ընկերակցութեամբ:

Օրուան առաջին խօսք առնողն էր հալէպահայ ծանօթ ազգայիններէն Տօթ. Գրիգոր Ատանալեան: Ան ներկայացուց սուրիահայ գաղութի դարաւոր պատմութիւնն ու ներկայ քաղաքացիական կռիւներու դրդապատճառն ու յատկապէս տարածաշրջանի եւ օտար պետութեանց շահադիտական ձգտումները: Ան իր ելոյթն աւարտեց ըսելով «Կը հաւատամ նոր ու բարգաւաճ Սուրիոյ»:

Դամասկոսի թեմի Առաջնորդ Գերշ. Արմաշ Եպս. Նալպանտեան իր ելոյթին մէջ Սուրիոյ ճգնաժամին անդրադառնալով յայտնեց թէ 30

Մար. Էջ 18

## Եւրոպական Միութիւնը Խստացուցած է Հայաստանի Նկատմամբ

Մաքսային Միութիւնն մտնելու Հայաստանի իշխանութիւններու որոշումէն յետոյ, Եւրոպական խորհրդարանը կոշտացուցած է իր դիրքորոշումը Լեւոնային Ղարաբաղի հարցով՝ փորձելով ոչ հայանպաստ ձեւակերպումներով յայտարարութիւն ընդունիլ: Այս պատճառաւ առաջին անգամ ըլլալով, Եւրոպական Միութիւնը-Հայաստան խորհրդարանական համագործակցութեան յանձնաժողովի նիստը աւարտած է առանց միատեղ յայտարարութեան:

Անցեալ շաբաթ Ստրասպուրկի մէջ տեղի ունեցած Հայաստան-Եւրամիութիւն խորհրդարանական համագործակցութեան յանձնաժողովի նիստի ժամանակ Եւրոպացի պատգամաւորները Ղարաբաղի հարցով ոչ հայանպաստ ելոյթներ ունեցած են՝ մեղադրելով Հայաստանին հարցի լուծման գծով յառաջընթաց չարձանագրուելու մէջ:

Հայաստան-Եւրամիութիւն խորհրդարանական համագործակցութեան յանձնաժողովի անդամ, «Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւոր Թեւան Պօղոսեան «Ազատութեան» ռատիոկայանի հետ գրոյցի ընթացքին պատմած է որ, Եւրոպացի խորհրդարանականները նոյնիսկ Հայաստանին մեղադրած են Ղարաբաղի հարցով միակողմանի զիջումներ չկատարելու համար:

«Կարծես ատրպէյճանական տեսակէտ յայտնէին՝ չկայ որեւէ առաջընթաց հինգ տարուամ, հինգ տարուամ որեւէ բան ինքներդ չէք արել, որեւէ միակողմանի զիջումներ չէք գնացել, եւ ժամանակն է եկել չէք գնացել իմք համախազահ Ֆրանսիան փոխելու Եւրամիութիւնով, իսկ Հայաստանը չի համաձայնում: Եւ հասկանալի էր,

որ իրենք կարծես որեւէ բացատրութիւն չէին էլ ցանկանում լսել: Ամենահետաքրքիրը դա էր», - ըսած է Պօղոսեան:

Հայկական պատուիրակութեան անդամները երբ փորձած են հակադարձել, Եւրոպացի խորհրդարանականները պարզապէս չեն լսած՝ պատճառաբանելով, թէ ժամանակ չունին:

Վերջին տարիներուն առաջին անգամ ըլլալով Եւրամիութիւն-Հայաստան խորհրդարանական համագործակցութեան յանձնաժողովի նիստը առանց յայտարարութեան աւարտելուն մէջ, ըստ Պօղոսեանի, մեղքի բաժին ունի նաեւ Հայկական կողմը: Ընդդիմադիր պատգամաւորի փոխանցմամբ, եթէ հայկական պատուիրակութիւնը դիւանագիտական ճկունութիւնը ցուցաբերէր, այս Հայաստանի շահերը չոտնահարող յայտարարութիւնը կ'ընդունուէր:

Թեւան Պօղոսեան տեղեկացուցած է որ, յայտարարութեան պատճէնին մէջ որեւէ հարցի հետ կապուած Եւրոպացիները առարկութիւններ չեն ներկայացուցած, նոյնիսկ Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին վերաբերող ձեւակերպման շատ արագ համաձայնած են, մինչդեռ Ղարաբաղի հարցով փորձած են պնդել իրենց մօտեցումները:

Իշխող Հանրապետական պատգամաւոր Սամուէլ Ֆարմանեան եւս համոզուած է որ, Ղարաբաղի հարցով Եւրոպացիներու դիրքորոշման կոշտացումը կապուած է Մաքսային Միութեան անդամակցելու մասին Հայաստանի իշխանութիւններու որոշման հետ:

«Առաւել մտահոգիչ է այն հանգամանքը, որ որոշ Եւրախորհրդարանականները, որոնք իրենք ինքնուրուշ չեն, Եւրոպացիներու դիրքորոշման կոշտացումը կապուած են Մաքսային Միութեան անդամակցելու մասին Հայաստանի հետ սահմանը»:

Մերկըլի այս խօսքերուն էր տողան արձագանքած է. «Դուք կ'ուզէք մեզ ստիպել ընդունելու բաներ, որոնք չեն եղած: Մենք մեր արիւնքները բացած ենք ու աշխարհին կոչ ըրած՝ գալ եւ ուսումնասիրել, բայց ոչ-ոք չեկաւ, այնպէս որ Թուրքիային անօրինակութեան մէջ մի մեղադրէք»:

Մար. Էջ 18

## Գերմանիոյ Վարչապետուհին Եւս Կոչ Ըրած Է Երտողանին՝ Հաշտուիլ Պատմութեան Հետ

Ֆրանսայի նախագահ Ֆրանսուա Օլանտի օրինակին հետեւելով, Գերմանիոյ վարչապետուհի Անճեւա Մերկըլը եւս կոչ ըրած է Թուրքիոյ վարչապետ Ռեճէփ Էրտողանին՝ հաշտուիլ պատմութեան հետ եւ բանալ Հայաստանի հետ սահմանը:

Թուրքական «Հիւրիիէթ» թերթի փոխանցած տեղեկութիւններուն համաձայն, վերջերս Գերմանիա կատարած այցելութեան ընթացքին Հայկական ցեղասպանութեան հարցը քննարկուած է երկու երկիրներու վարչապետներու հանդիպման ընթացքին:

Նախ էրտողան ինք, Գերմանիոյ վարչապետուհին զգուշացուցած է մօտեցող 2015-ին ընդա-

ռաջ Հայկական հարցով զգոյշ ըլլալ: Այս զգուշացման Մերկըլը պատասխանած է ըսելով, «Գերմանիան ժողովրդավարական երկիր է, մենք չենք կրնար միջամտել: Թուրքիան պէտք է հաշտուի իր պատմութեան հետ: Հայաստանի հայերը դժուար կացութեան մէջ են: Թուրքիա պէտք է բանալ Հայաստանի հետ սահմանը»:

Մերկըլը այս խօսքերուն էր տողան արձագանքած է. «Դուք կ'ուզէք մեզ ստիպել ընդունելու բաներ, որոնք չեն եղած: Մենք մեր արիւնքները բացած ենք ու աշխարհին կոչ ըրած՝ գալ եւ ուսումնասիրել, բայց ոչ-ոք չեկաւ, այնպէս որ Թուրքիային անօրինակութեան մէջ մի մեղադրէք»:

ՎԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍՈՒ

ԻՆՉՈՒ Է ԸՆԴՊԵՐՈՒԹՅՈՒՆԸ
ԳՈՐԾԵԼՈՒ ՎՈՒԽԱՐԷՆ ԴՄԱՆՐՈՒՄ

ԱՐՄԵՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ

Կենսաթոշակային պարտադիր կուտակային բաղադրիչի դեմ պայքարը Յունուարի 18-ին կայացած հանրահավաքից յետոյ փաստացի ընթացում է առանց ոչ իշխանական քաղաքական ուժերի: Այդ օրը որոշակիորեն ընդգծուեց մի կողմից գործընթացը յանհրաժեշտ կուտակահանցանքները միտումը՝ ՀԱԿ-ից եւ պոպուլիզմի օբյեկտի վերածելու ձգտումները՝ ԲՀԿ-ից, իսկ միւս կողմից՝ շարժման երիտասարդ նախաձեռնող խմբի՝ դա թոյլ չտալու վճռականութիւնը: Յունուարի 24-ին ՍԴ-ի կողմից կուտակային բաղադրիչի պարտադիր կիրառումն ապահովող օրէնքի երկու յօդուածները գործողութիւնը կասեցնելուց, ինչպէս նաեւ ԱԺ գարնանային նստաշրջանի մեկնարկից յետոյ շարժումից այս քաղաքական ուժերի օտարումը դարձաւ ակնյայտ, թէեւ Ֆորմալ առումով նրանք շարունակում են մնալ երիտասարդների կողքին: Այս տենդենցից շարժումը սուրբեց ոչ թէ բովանդակային առումով, այլ այսպէս կոչուած փաթեթաւորման: Ոչ իշխանական չորս ուժերի՝ «Ժառանգութեան», ՀՅԴ-ի, ՀԱԿ-ի եւ ԲՀԿ-ի հիմնական անելիքը հարցը քաղաքականացնելն էր, համահասարակական ընդգրկման հանգեցնելը, որը, սակայն, նրանց այդպէս էլ չչաջողուեց:

Արդիւնքում կուտակային պարտադիր բաղադրիչի դեմ պայքարը դուրս չեկաւ սոցիալ-քաղաքացիական նեղ կադապարից եւ շարունակեց ընկալուել սոսի որպէս բարձր աշխատավարձ ստացող մի խումբ ծրագրաւորողների սոցիալական հետաքրքրութիւնները շոշափող բողոքի ակցիա: Մինչ-

դեռ սա այն եզակի քաղաքացիական շարժումն էր, որը ծնուել էր հասարակութեան ներսից, հասունանում էր հասարակութեան ներսում կառավարում նրա կողմից եւ բխում էր հասարակական լայն գանգոլածի թէ սոցիալ-տնտեսական եւ թէ քաղաքական պահանջ-մոտեցումներից: Սա այն հարթակն էր, որտեղ կարող էին սինթեզուել եւ յստակ ձեւակերպուած քաղաքական պահանջի վերածուել հասարակական բոլոր այն շրջանակների դժգոհութիւնները, սպասելիքները, որոնք մերթ ընդ մերթ փողոց են դուրս գալիս, բայց իւրաքանչիւրն իր պահանջով, առանձին-առանձին ու հատուածաբար:

Ընդդիմութիւնը ձախողեց ու շարունակում է բարեջաջող ձախողել այս բոլոր շրջանակներին համատեղելու, զեյգերները նման այստեղ-այնտեղ դուրս ժայթքող գոլորշին հրաբխի վերածելու բանաձեւ գտնելու իր հիմնական առաքելութիւնը՝ շարունակելով կառչած մնալ միայն պրոցեսի պոչից: Մինչդեռ առաջնորդողի դեր ստանձնելը որքան հասարակութեանն էր պէտք՝ սեփական ուժերի նկատմամբ վստահութիւնը ձեռք բերելու համար, նոյնքան էլ այդ ուժերին՝ անցած խորհրդարանական եւ նախագահական ընտրութիւնների արդիւնքում յայտնուած մարգինալ դաշտից դուրս պրծնելու եւ քաղաքական գործօնի վերածուելու առումով:

Ընդդիմութեան ձգուող ձախողումը, սակայն, լրիւ օրինաչափ է: Դրա հիմնական պատճառն այն է, որ այս ուժերը, որպէս հաւաքականութիւն, չկարողացան փշրել իրենց նկատմամբ ձեւաւորուած հասարակական անվստահութեան պատը: Արհեստականութիւնը թէ

հասարակութեան եւ թէ իրար հետ յարաբերութիւններում այնքան ակնյայտ է, որ ստուերում է ցանկացած առողջ նախաձեռնութիւն: Այդպէս էլ պարզ չդարձաւ, թէ ինչպէս ստացուեց գաղափարական լրիւ հակառակ բեւեռներում գտնուող ՀԱԿ-ի եւ ՀՅԴ-ի մերձեցումը: Ինչպէս եղաւ, որ ընտրութիւնների ընթացքում միմիանց իշխանութեան գործակալները լինելու մէջ մեղադրող ԲՀԿ-ն ու «Ժառանգութիւնը» յանկարծ սկսեցին խօսել միեւնոյն լեզուով: Կամ՝ ինչպէս պատահեց, որ կուտակային համակարգի ներդրման օրէնսդրական բազայի ձեւաւորման անմիջականօրէն մասնակցած ԲՀԿ-ն միանգամից հարիւր ութսուն աստիճանով փոխեց դիրքորոշումը այսպէս կոչուած այլընտրանք դառնալուց յետոյ, կամ ինչպէս է լինում, որ այն միաժամանակ ԲՀԿ-ն խորհրդարանում դէմ է քուէարկում նախագահ Սերժ Սարգսեանին նշանակած կառավարութեան օրէնսդրական նախաձեռնութիւններին եւ նրա առաջնորդ Գագիկ Ծառուկեանը անձնական ջերմ յարաբերութիւններ է պահպանում նոյն «նախագահ ջանի» հետ:

Խնդիրն այն չէ, որ այս ուժերը փորձում են համատեղել ուժերը՝ ունենալով ներքին հսկայական քաղաքական, գաղափարական ու արժէքային հակասութիւններ: Քաղաքականութեան մէջ հակասութիւնը ժամանակաւոր երեւոյթ է: Խնդիրն այդ հակասութիւնների շուրջ կուտակուած հարցադրումներն անպատասխան թողնելն է: Մինչդեռ առաջին պայմանը, որը դնում է հասարակութիւնը քաղաքական ուժերի առջեւ, իր հետ հնարաւորինս ազնիւ լինելն է, որը հնարաւոր է առանց կասկածների աղբիւրները չորացնելու: Դա հնարաւոր չէ նաեւ առանց ուժերի համատեղման եւ ընդհանուր վերջնական պատակները ընդհանրացնելու եւ դրանք հասարակութեան

հետ համաձայնեցնելու: ՀԱԿ-ը եւ «Ժառանգութիւնը», օրինակ, իբրեւ վերջնական պատակ, տեսնում են իշխանափոխութիւնը՝ նոր նախագահական ընտրութիւնների միջոցով: ՀՅԴ-ն՝ իրավիճակի փոփոխութիւնը տեսնում է կառավարութեան փոփոխութեան ճանապարհով: Իսկ ԲՀԿ-ն ուզում է ամէն ինչ եւ ոչինչ միաժամանակ: ԲՀԿ-ն, ըստ էութեան, այս հակա-իշխանական գործընթացի մէջ մտել է այսպէս կոչուած «գետը որտեղ կը տանի, թող տանի» տրամաբանութեամբ, ինքնընդհատ ուժով:

Ոչ իշխանական ուժերի մարտավարութիւնների այս բազմազանութիւնը լաւագոյնս դրսեւորւում է խորհրդարանում: Թւում է, որ նրանք ԱԺ-ում գործում են փոխհամաձայնութեամբ, եւ նրանց միջեւ լիակատար փոխըմբռնում կայ: Սակայն փոխհամաձայնութեան եւ փոխըմբռնման նրանց մոտիւրացիան միայն փոքրամասնութիւն լինելը, այսինքն՝ իրավիճակի փոխելու հարցում ունեցած անկարողութեան գիտակցումն է: Վերջինս տոտալ կերպով թելադրւում է իշխանութեան եւ քաղաքական մեծամասնութեան կողմից՝ ոչ իշխանական հաստուածին ամբողջութեամբ բրկադայի ենթարկելու, անկիւնում սեղմելու անհանդուրժողական վարքագծով:

Այնպիսի սպաւորութիւն է, որ ոչ իշխանական ուժերը տարբեր հարցերում, օրինակ՝ կենսաթոշակային կուտակային պարտադիր բաղադրիչի, հայ-ուսական գազային պայմանագրերի, Որոտանի կասկադի վաճառքի եւ այլն, նախաձեռնութիւնները ցուցաբերում են այն կանխատեսմամբ, որ միեւ-

Շաբ.բ էջ 18

Մերկել. Զայերը տարբեր են լինում

ՆԱԹՐՈՒ ՀԱՅՐՈՒՄԵԱՆ

Թուրքիայի «X ժամի»՝ 2015-ի նախօրէին համաշխարհային մակարդակի քաղաքական աւելի ու աւելի շատ գործիչներ են խօսում Հայերի ցեղասպանութեան ճանաչման անխուսափելիութեան մասին: Ընդ որում, Թուրքիային նոյնպէս յորդորելով ճանաչել: Այն, ինչ կատարուում է Միւրիայում, Պաշար Ասատը համեմատել է Օսմանեան կայսրութիւնում տեղի ունեցած ցեղասպանութեան հետ: Հայերին ցեղասպանութեան վերաբերելու նամակով դիմել է Աբդուլլահ Օջալանը: Ֆրանսայի նախագահ Ֆրանսուա Օլանդը Անկարայում յայտարարել է, որ Թուրքիան ստիպուած է առերեսուել իր պատմութեան հետ:

Սակայն ամենայնուայնուապէս Պերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի խօսքն էր էրզողանին: Գերմանիայի կանցլերը, որը մի քանի տասնամեակ հատուցում է Հոլոքոսթի համար, Թուրքիային կոչ է արել ընդունել իր պատմութիւնը: Էրզողանը հակադարձել է, թէ իրենք չպէտք է պատասխան տան այն բանի համար, ինչը չեն արել: Եւ այդ ժամանակ Մերկելը սակարալ արտայայտութիւն է արել: Համաձայն Թուրքական Հիւրըրի-թի, Մերկելը նկատել է, որ պէտք է նոյնացնել սփիւռքի ու Հայաստանի հայերին: Հայաստանի հայերը բարդ վիճակում են: Թուրքիան

պէտք է բացի Հայաստանի հետ սահմանը, ասել է կանցլերը:

Այս սակարալ արտայայտութիւնը նշանակում է երկու «հայկական ճակատ» Թուրքիայի դէմ՝ Հայաստանը եւ սփիւռքը: Եւ համաշխարհային հանրութիւնը թեւեւ մտադիր է պահել երկու ճակատն էլ: Ընդ որում, անկախ Հայաստանի իշխանութեան կամքից, որը չկայ ոչ մի ճակատում:

Միջազգային հանրութիւնը թերեւս կ'աջակցի սփիւռքի հայու-թեան պահանջներին, որը ցեղասպանութեան արդիւնքում գրկուել է պատմական հայրենիքից ու սեփականութիւնից: Սակայն համաշխարհային հանրութիւնը պահանջը չենք էլ նաեւ, որ Թուրքիան բացի Հայաստանի հետ սահմանը, տարածաշրջանում բաց հաղորդակցութիւններ ստանալու համար:

Արդեօք Թուրք ղեկավարները համակերպուել են ցեղասպանութեան ճանաչման մտքին եւ մտածում են միայն այդ իրավիճակից նուազագոյն կորուստներով դուրս գալու մասին: Եւրոպան Թուրքիայի հետ մերձենալու պայման է դնում Հայաստանի հետ սահմանի բացումն ու ցեղասպանութեան ճանաչումը: Թուրքիայում կարծում են, որ այս պայմանները կատարումը կարող է հանգեցնել ոչ միայն ստորձեռքային, այլեւ քաղաքական կորուստների եւ նրան նետել քաղաքականու-

թեան յետնախորշը: Միւս կողմից, այդ պայմանները չկատարելը վերջնականապէս մարգինալացնում եւ մեկուսացնում է Թուրքիային:

Ներկայում Թուրքիայում արդէն խօսում են նրա դէմ միջազգային լայն ճակատի մասին, ընդ որում ինչպէս արեւմտեան, այնպէս էլ «չիա եւ կանաչ գոտում»: Էրզողանի կուտակցութիւնը մտադիր է դիմակայել բոլոր ճակատներով, եթէ իհարկէ Մարտի 30-ին կարողանայ յաղթել տեղական ինքնակառավարման մարմինների, իսկ Օզգոտտոսին՝ նախագահի ընտրութիւններում: Դա հեշտ չի լինելու (Մերկելն այդ մասին ակնարկել է էրզողանի հետ հանդիպմանը), եւ հայկական գործօնը ոչ քիչ դեր է խաղալու: Զուր չէ, որ Թուրքիայում սկսել են խօսել այն մասին, որ էրզողանի գլխաւոր ընդդիմախօսը՝ Գիւլենը, հայկական ծագում ունի:

Սոչիի օլիմպիադայի բացմանը Սերժ Սարգսեանը նստած էր էրզողանից ոչ շատ հեռու: Հնարաւոր է՝ դրա նպատակը մասնաւոր զրոյց կազմակերպելն է եղել: Սակայն, ըստ ամենայնի, այդ զրոյցը չի եղել, քանի որ Հայաստանի ու սփիւռքի հայերը տարբեր են: Եւ համաշխարհային հայութեան նպատակները ոչ միշտ են համընկնում Հայաստանի ղեկավարների նպատակների հետ:

«ԼՐԱԳԻՐ»

ՄԱՍԻՍ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Մրջամի
ԽՄԲԱԳԻՐ
ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆԾԵԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$80.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

# ԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## Հայաստանում ՋԼՄ-ների Չեն Կատախում



Երեւանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նաւասարդեան կը խօսի մամուլի վիճակի մասին

Հայաստանում վստահութեան աստիճանը լրատուամիջոցների նկատմամբ բաւականին ցածր է: Հիմնական պատճառը, ըստ հարցու-առարկաների, քաղաքական ազդեցութիւններն են գանգուածային ՋԼՄ-ների վրայ: Այս պատկերն է ստացուել «Հայաստանի մեդիա ինդուստրիայի ներկայ վիճակը» հետազոտութեան արդիւնքում:

Հետազոտութեանը մասնակցած փորձագէտները եւս համարում են, որ քաղաքական կախուածութիւնը խանգարում է ՋԼՄ-ների կայացմանը, հանգեցնում ինքնազրաքննութեան:

Ներկայացնելով հետազոտութիւնը, Երեւանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նաւասարդեանն ասաց, որ Հայաստանում առաւել վստահելի կառույցներ են մնում բանակը եւ եկեղեցին: Շատ աւելի քիչ վստահելի են այլ կառույցները, այդ թւում նաեւ՝ ՋԼՄ-ները, որոնք եւ տեղեկատուութիւններ են տարածում միւս՝ աւելի վստահելի կառույցների մասին:

Հետազոտութեան արդիւնքում պարզուել է, որ ուշադրութիւնը հեռուստատեսութիւնից՝ որպէս տեղեկատուութեան աղբիւրից, տեղափոխուում է դէպի այլ լրատրանսքային լրատուութեան աղ-

բիւրներ: Մարդիկ թղթային թերթից աստիճանաբար անցնում են թերթի այն տարբերակներին, որոնք ներկայացուած են առցանց: Փորձագէտները եւս սպաւազի մամուլի ապագայի հարցում լաւատես չեն եւ որպէս լուծում առաջարկում են կոնվերգենտ ՋԼՄ-ները:

Ըստ հետազոտութեան՝ գրանցուել է ինտերնետից օգտուելու ժամանակի աճ: Գիւղական համայնքներում աւելի արագ է աճում ինտերնետից օգտուելու դիւնամիկան, քան քաղաքներում: ԲՉՂային հեռախօսները՝ որպէս ինտերնետից օգտուելու գործիք, առաւել ակտիւ են օգտագործուում:

Ըստ փորձագէտների՝ առաջիկայ 5 տարում ՀՀ բնակչութեան մեծամասնութիւնը կը դառնայ ինտերնետի օգտատէր, միաժամանակ բարձր կը շարունակի մնալ պրոֆեսիոնալ ՋԼՄ-ների դերը՝ չնայած սոցիալական ցանցերի գործունէութիւնը:

«Հարցուածների, փորձագէտների, հանրութեան պատկերացումները, թէ ինչպիսին է պահանջարկը, լրջօրէն տարբերում են այն տուեալներից, որոնք մեր ՋԼՄ-ները ստանում են մեդիա չափումներից», - ասաց Բորիս Նաւասարդեանը:

## Պատգամաւորը «Վատ» Բազմակարծութեան Մտավախութիւն Ունի

Մտավախութիւն կայ, որ Հայաստանը սկսելու է պատճենել Մաքսային Միութիւնում քաղաքական բազմակարծութեան նկատմամբ վերաբերմունքի վատ օրինակները: Այդ մասին յայտարարել է ԱԺ պատգամաւոր Էդմոն Մարութեանը՝ խօսելով Ստրասբուրգում Փետրուարի 5-6-ին կայացած Հայաստան-ԵՄ միջխորհրդարանական համագործակցութեան յանձնաժողովի նիստի մասին:

Նրա խօսքով, Հայաստանի համար դեռ վերջնականապէս չի փակուել Եւրամիութեան հետ յարաբերութիւնների զարգացման դուռը: «Պէտք է շարունակել աշխատել բոլոր ոլորտներում, որտեղ համագործակցութիւնը հնարաւոր է, ներառեալ՝ Արեւելեան գործընկերութեան հարթակը, պայքարը կողակցի դէմ, ազնիւ կառավարման ներդրումը: Բայց այժմ էլ մեր եւրոպացի գործընկերների համար յստակ չէ, թէ որ ոլորտներում նրանք կարող են շարունակել համագործակցութիւնը Հայաստանի հետ: Եւ խորհրդարանական դիւանագիտութիւնն այստեղ պէտք է աւելի ակտիւ լինի», - յաւելել է Մարութեանը:

## «Իսլամացած Հայերի Խնդիրների Շուրջ» Խորագրով Կլոր Սեղան-քննարկում՝ Սփիւռքի Նախարարութիւնում

Հայաստանի սփիւռքի նախարարութիւնում, կայացել է «Իսլամացած հայերի խնդիրները շուրջ» խորագրով կլոր սեղան-քննարկում: Քննարկմանը մասնակցել են ՀՀ սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանը, համահայկական կառույցների ներկայացուցիչներ, թուրքագէտներ, ազգագրագէտներ, ուսումնական եւ գիտական կենտրոնների ղեկավարներ: Քննարկման ընթացքում ներկայացուել են թեմային վերաբերող գեկուցումներ, ելույթներով եւ առաջարկներով հանդէս են եկել մի շարք մասնակիցներ: Վերջում ամփոփիչ խօսքով հանդէս է եկել ՀՀ սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանը եւ շնորհակալութիւն յայտնել մասնակցութեան եւ կառուցողական առաջարկների համար:

## «Իշխանութեան Քայլերից Ո՞րը Սիտուաժ Չէ Պետութեան Շահերին».- Սամուէլ Նիկոյեան

Նախկին ԱԺ նախագահ, ԱԺ «Հանրապետական» խմբակցութեան պատգամաւոր Սամուէլ Նիկոյեանի համար զարմանալի են ընդդիմադիր հատուածում հնչող յայտարարութիւնները:

«Իշխանութեան քայլերից ո՞րը միտուած չէ պետութեան շահերին», - Tert.am-ի հետ զրոյցում հարցրեց Նիկոյեանը, ի պատասխան դիտարկման, որ ընդդիմադիրների դաշտում հնչում են տեսակէտներ, որոնցում ապագային են որակում «գազային» համաձայնագրերի կնքումը, «Հայ-Ռուսագազարդի» վերջին 20%-ի ու Որոտանի ՀէԿ-երի վաճառքի գործարքները:

«Եթէ 20%-ի օտարումը ապագային դիտուեց, բաւ է 80%-ի օտարումը, որ մինչեւ այդ տրուել է, դա ազգային էր, որ այս 20%-ը դարձաւ ապագային: Չեմ ասում՝ ինչի՞ են օտարուել, որովհետեւ հասկանում եմ՝ որոշումը կայացնելու հիմքը եղել է այն, որ գազի գները պահանջ», - ասաց նա:

Սամուէլ Նիկոյեանն ընդօժեց, թէ նոյն 20%-ի վաճառքով կառավարութիւնը նոյնպէս արեց հնարաւորը, որպէսզի որոշակի չափով մեղմի գազի գնի բարձրացումը:

ՀՀ պատգամաւորը յիշեցրեց, թէ գազի գնի բարձրացման կարճ ժամանակահատուածում (2011 թ. Ապրիլի 1-ից մինչեւ 2013 թ. Յուլիի 6-ը) միայն 300 մլն դոլար գումար պարտք էր կուտակուել:

«Բանակցութիւնների արդիւնքում կարողացանք հասնել



Պատգամաւոր Սամուէլ Նիկոյեան

նրան, որ 150 մլն ռուսական կողմը վերցնելու վրայ, 150 մլն-ի փոխարէն էլ «Հայ-Ռուսագազարդի» 20%-ը տրուեց: Ամէն ինչ արուեց, որ գազը էժան մնայ: Ես ասում եմ էժան է, ուղղակի հասարակութեան գնողունակութիւնն է ցածր», - նշեց նա:

Ինչ վերաբերում է հնչող մէկ այլ մեղադրանքի, թէ վարչապետ Տիրան Սարգսեանը չկարողացաւ ապահովել երկրի նախագահի պահանջած 7% տնտեսական աճը, եւ գրանցուեց ընդամենը 3,5% ցուցանիշ, Սամուէլ Նիկոյեանն ասաց, որ պէտք է հաշուի առնել բիւջետում առաջադրուած ցուցանիշը, որն աւելի իրատեսական էր:

Վերջում Սամուէլ Նիկոյեանի յաւելեց, որ ՄՄ-ին անդամակցելու քաղաքական որոշումը կ'ապահովի տնտեսական մակարդակի բարձրացում եւ իհարկէ ազգային անվտանգութեան խնդիրների լուծում:

## Նիկոլ Փաշինեան Ու Սատու Միքայէլեանը Մարտի 1-ի Գիշերը Կը Լինեն Միասնակեանի Արձանի Մօտ

ԱԺ պատգամաւոր Նիկոլ Փաշինեանն ու ազատամարտիկ, «Սատու» ջոկատի հրամանատար Սատու Միքայէլեանը Մարտի 1-ի գիշերը կը լինեն Միասնակեանի արձանի մօտ: Այդ մասին Facebook-ի իր էջում գրել է Նիկոլ Փաշինեանը:

«Այսօր Սատու Միքայէլեանի հետ որոշեցինք Մարտի 1-ի լոյս 2-ի գիշերը լինել այնտեղ, որտեղ եղել ենք Մարտի 1-ի, լոյս 2-ի գիշերը՝ 2008 թուականին:

Ըստ այդմ, 2014 թուականի Մարտի 1-ի երեկոյեան, ժամը

21.00-ին Սատու Միքայէլեանի հետ կը լինենք Միասնակեանի արձանի մօտ, այնտեղ կ'անցկացնենք ողջ գիշերը, այնտեղ կը դիմաւորենք Մարտի 2-ի լուսաբացը. մի բան որ չչաջողուեց 2008-ին:

Այսպիսով՝ յարգանքի տուրք կը մատուցենք Մարտի 1-ի տասը զոհերի յիշատակին, կը հաստատենք մեր հաստատակամութիւնը՝ մարտիմէկեան սպանութիւնները բացառելու հարցում, մեր նուիրուածութիւնը՝ Մարտի 1-ի Քաղաքացիական արժէքներին, ձգտումներին եւ պայքարին», - նշել է նա:

## Լարիսա Ալավերդեան. «Մարդը Կուշտ Կեանքն է Վեր Դասում»

«Արտագաղթը հասարակութեան անհամաձայնութեան դրսեւորումներից մէկն է իշխանութեան քաղաքական որոշմանը», - Սամուլի ազգային ակումբում կարծիք յայտնեց ՀՀ վարչութեան անդամ Կարէն Կարապետեանը՝ Հայաստանում Ֆրանսիայի դեսպանութեան աշակցութեամբ կազմակերպուած «Հայաստանի ճանապարհը դէպի Եւրոպա. խնդիրներ եւ հնարաւորութիւններ» թեմայով քննարկման ժամանակ:

Բանախօսը համաձայն չէ, որ հասարակութեան մօտ ութսուն տոկոսը ձգտում է ՌԴ. «Մարդկանց մօտ վախ կայ, որ «ռուսը չլինի թուրքը մեր գլուխը կ'ուտի», ոչ թէ ձգտում՝ ՌԴ-ի արժէ-համակարգին ինտեգրուելու:

Մարդն ազատ կեանքը վեր է դասում ամէն ինչից»: Վերջին դիտարկմանը չհամաձայնեց ՀՀ մարդու իրաւունքների առաջին պաշտպան Լարիսա Ալավերդեանը. «Մարդը կուշտ կեանքն է վեր դասում:

Ես մտավախութիւն ունեմ, որ անգամ եթէ դրախտ մտնենք, այս վիճակում չենք օգտուելու դրախտի քաղցրագոյն պտուղներից»: Տիկին Ալավերդեանն այն կարծիքին է, որ այս վիճակի մեղքն իշխանութեանն է, բայց պատասխանատուութիւնը բոլորինս. «Մեր հասարակութեան մէջ որակական փոփոխութիւններ են տեղի ունենում: Խնդիրը մեր մէջ է»: Տիկին Ալավերդեանը նկատում է, որ մենք բոլորի վատն ենք վերցնում:

# ԼՈՒՐԵՐ

## Սիրիահայերից Շատերը Հայաստանում Մնալու Ցանկությունը Չունեն

Սիրիայում շարունակվող պատերազմի հետևանքով փախստական դարձած սիրիահայերից շատերը Հայաստանում մնալու ցանկություն չունեն եւ պատերազմի աւարտից յետոյ պատրաստուած են բռնել յետդարձի ճամբան կամ հաստատուել այլ երկրներում:

Սիրիայի կառավարութեան ու ընդդիմութեան միջեւ շուրջ երեք տարի ձգուող հակամարտութեան հետեանքով Հայաստան տեղափոխուած մօտ 16 հազար սիրիահայ: Նրանցից 5 հազարը, սակայն, չմնաց հայրենիքում՝ հետ վերադառնալով կամ տեղափոխուելով Եւրոպա, ԱՄՆ:

Թէեւ չկայ որեւէ ուսումնասիրութիւն, թէ խաղաղութիւն հաստատուելուց յետոյ քանի սիրիահայ կը լքէ Հայաստանը, Հայաստանում մնացողները շրջանում տրամադրութիւնը սպասողական է:

«Հայէպը դժուր է կը գնամ: Հայէպ «բարաքաթ» կայ, «խէր» կայ, գործ կայ, փող կայ: Այստեղ աղքատ քաղաք է», - ասում է Ալեքսան Սողոմոնեանը, ով մէկուկէս տարի է՝ ինչ Հայաստանում է: Իր ընտանիքի ապագան Հայաստանի հետ չի կապում: Համատարած գործազրկութեան պայմաններում սիրիահայերից շատերի պէս նա էլ չի կարողանում կայուն ու բաւարար աշխատավարձով աշխատանք գտնել: Ալեքսանն արդէն երրորդ աշխատանքն է փոխում: Նրա ընտանիքում այժմ կինն ու մեծ որդին են աշխատում: Ստացած գումարով հազիւ հասցնում են տան վարձը վճարել ու հացի խնդիրը լուծել:

Անորոշութեան մէջ է նաեւ Փեգի Բապոյլեանի ընտանիքը: Չնայած սիրում են հայրենիքը, բայց դեռ չգիտեն, թէ որտեղ ի վերջոյ կը հանգրուանեն:

## ԶԵՐ Հարցականի Տակ Է Դնում ՄԱ-ին Հայաստանի Անդամակցութեան Արդիւնաւետութիւնը

Զարգացման Եւրասիական Բանկը, ըստ հուլիսեան, հարցականի տակ է դնում Մաքսային Միութեանը Հայաստանի անդամակցութեան արդիւնաւետութիւնը՝ նշելով, որ երկարաժամկէտ կտրուածքով միութեանը Հայաստանի անդամակցութեան արդիւնաւետութեանը կարողութեան է մի շարք նախագծերի իրականացումից՝ Վրաստանի տարածքով դէպի Ռուսաստան գնացող երկաթգծի ու ավտոմայրուղու շահագործումից, հներգետիկ մի քանի նախագծերից, որոնք կապուած են Իրանի հետ, եւ Հայաստանի ներդրումային գրաւչութեան բարձրացումից:

Զարգացման Եւրասիական բանկը Ռուսաստանի, Ղազախստանի, Բելառուսի, Տաջիկստանի ու Հայաստանի մասնակցութեամբ գործող պետական բանկ է, որի կենտրոնակայանը գտնուած է Ալմաթիում: Բանկը վերջերս պատրաստել է յատուկ մի գեկոյց՝ «Հայաստան եւ Մաքսային միութիւն, ինտեգրացիայի տնտեսական արդիւնքի գնահատական» անուամբ:

Զեկոյցը «փակուղային» է բնորոշում Հայաստանի արտաքին փոխադրումների հետ կապուած իրավիճակը եւ ընդգծում, որ Ռուսաստանին կապող «Հիւսիս-Հարաւ»

«Ամէն ինչ կախեալ է գործից: Թէ որ գործ ունենաս, հանգիստ կեանք ունենաս, շատ լաւ երկիր է: Իհարկէ, որ տան վարձ ես տալիս՝ կեանքը այստեղ մի քիչ աւելի թանկ է», - ասում է նա:

Փեգիի ամուսինը Սիրիայից Հայաստան է բերել իր գործը, բայց ծաւայները համեմատելի չեն Սիրիայի հետ:

Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոնում ասում են, որ Հայաստանը լքող սիրիահայերից շատերը հիմնականում այլ երկիր են տեղափոխուած: Քիչ չեն նաեւ Հայէպ վերադարձողները, նշում է կենտրոնի ղեկավար Լենա Հալաջեանը:

Սփիւռքի նախարարութիւնում ասում են, որ իրենց դիմող սիրիահայերից կէսից աւելին մտադիր է մնալ այստեղ: Բայց հայրենիքում հաստատուելու մի պայման կայ, եթէ այստեղ բնակարան ու աշխատանք ունենան, ասում է նախարարութեան Մերձաւոր եւ Միջին Արեւելքի հայ համայնքների վարչութեան պետ Լուսինէ Ստեփանեանը:

«Այսօր Հայաստանում մնալու տրամադրուածութիւնը աւելի շատ է, քան մէկուկէս տարի առաջ», - փաստում է նա:

Նախարարութեան տուեալներով, Հայաստանում գտնուող 11.000 սիրիահայերից աշխատանք ունի հազարը: Ստեփանեանը նկատում է, որ այս ցուցանիշը այդքան էլ ցածր չէ՝ հաշուի առնելով այն հանգամանքը, որ սիրիահայ կանայք հիմնականում չեն աշխատում:

Տարբեր տուեալներով, Սիրիայում է մնացել հայկական 100 հազարանոց համայնքի մէկ երրորդը: Փակ ճանապարհների պատճառով նրանցից շատերը չեն կարողանում լքել Սիրիան:

ավտոմայրուղու կառուցումը, աբխազական երկաթուղու վերագործարկումը եւ դէպի Իրան ձգուող երկաթգծի շինարարութիւնը անչափ կարեւոր են Մաքսային Միութեանը Հայաստանի անդամակցութեան տեսանկիւնից:

«Առանց տրանսպորտային խնդրի լուծման Մաքսային միութեանը եւ Միացեալ տնտեսական տարածքին Հայաստանի անդամակցութիւնը չի կարող հանգեցնել առաւելագոյն դրական արդիւնքի ո՛չ Հայաստանի Հանրապետութեան համար, ո՛չ էլ ինտեգրացիոն «եռեակի» [Ռուսաստանի, Բելառուսի ու Ղազախստանի] համար», - ասուած է գեկոյցում:

Ընդ որում, գեկոյցի հեղինակները գտնում են, որ աբխազական երկաթուղու վերագործարկումը հիմք կը ստեղծի Մաքսային Միութեանը նաեւ Վրաստանի անդամակցութեան համար:

«Ընդհանուր սահմանի դէպքում իսկապէս տնտեսական արդիւնքը շատ հակա կը լինի: Երբ չկայ այդ սահմանը, երբ ՄՄ-ի անդամ ես դառնում, եւ միջնորդաւորուած՝ երրորդ երկրի միջոցով ես կապ հաստատում ՄՄ-ի երկրների հետ, այդ դէպքում այդ միութեան մէջ մտնելու արդիւնաւետութիւնը, գոյութիւն ունեցող

## Մոսկուան Դեռ Զի Արձագանքել Հայ Ներգաղթեալների Համար Վիզային Ռեժիմը Մեղմացնելու Խնդրանքին



«Զուարթնոց» օդակայանէն հայեր կը մեկնին դէպի Ռուսաստան եւ այլուր

Ազգային անվտանգութեան խորհրդի խօսնակ Արթուր Միսաքեանը «Ազատութեան» հետ զրոյցում հաստատեց ռուսական «Իզվեստիա» պարբերականի տեղեկութիւնն այն մասին, որ անվտանգութեան խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարեանը օրերս նամակով դիմել է ռուսաստանցի իր գործընկեր Նիկոլայ Պատրուշեւին՝ ռուսական միգրացիոն օրէնսդրութեան մէջ փոփոխութիւն մտցնելու եւ Ռուսաստանում հայաստանցի ներգաղթեալների գտնուելու պայմանները մեղմացնելու խնդրանքով՝ հաշուի առնելով Մաքսային Միութեանն անդամակցելու Հայաստանի որոշումը:

Խօսքը Ռուսաստանում Յունուարի 1-ից գործող վիզային ռեժիմի մասին է, որով առանց պաշտօնական աշխատանքային պայմանագրերի սեզոնային աշխատանքի նպատակով Ռուսաստանի տարածքում գտնուող օտարերկրեայ քաղաքացիների համար սահմանուած է երկրում գտնուելու առաւելագոյնը 90-օրեայ ժամկէտ: Դրանից յետոյ նրանք առնուազն 90 օր պէտք է գտնուեն Ռուսաստանից դուրս, որից յետոյ կարող են կրկին վերադառնալ:

«Հայաստանն ըմբռնումով է վերաբերում ապօրինի միգրացիայի դէմ պայքարի ու ժողովրդային անվտանգութեամբ՝ Ռուսաստանի իշխանութիւնների գործադրած միջոցներին: Բայց դրանցում հաշուի

չեն առնում Մոսկուայի եւ Երեւանի ժամանակակից ինտեգրացիոն քաղաքականութեան որոշ կարեւոր երանգներ», - նամակում նշել է Բաղդասարեանը՝ ընդգծելով, որ Հայաստանն ու Ռուսաստանը ռազմավարական դաշնակիցներ են «եւ արդէն ոչ միայն ՀԱՊԿ-ի, այլ շուտով նաեւ Մաքսային Միութեան շրջանակներում»:

«Ռազմավարական գործընկերների, մասնաւորապէս Հայաստանի հետ Ռուսաստանը կարող է իրեն թոյլ տալ լիբերալ մօտեցում, ինչպէս, օրինակ, դա իր ներսում արել է Եւրամիութիւնը», - «Իզվեստիայի» փոխանցմամբ նշել է Բաղդասարեանը:

Արթուր Միսաքեանը փոխանցեց, որ Ռուսաստանի ազգային անվտանգութեան խորհուրդը դեռ չի արձագանքել նամակին, բայց հայկական կողմը ակնկալիքներ ունի:

«Խօսքը շատ լուրջ գործընթացի մասին է: Դա ռուսական կողմը ըստ հուլիսեան կը քննարկի, որոշակի շփոթներ կը լինեն հայկական համապատասխան կառույցների հետ, խորհրդատուական որոշակի գործընթացներ կը լինեն: Դա, իհարկէ, մէկ-երկու օրուայ հարց չէ», - ասաց Միսաքեանը:

«Իզվեստիա»-ի տեղեկութիւններով, միգրացիոն խստացում օրէնսդրութիւնը կ'անդրադառնայ Ռուսաստանում գտնուող շուրջ 2 միլիոն հայերի վրայ:

առաւելութիւնները դառնում են զրօ», - ասաց տնտեսագէտը:

Զեկոյցը փաստում է՝ Հայաստանի անդամակցութիւնը Մաքսային միութեանը կը հանգեցնի երկրի արտաքին առեւտրաշրջանառութեան փոփոխութեանը: Հայաստանի ազգային վիճակագրական ծառայութեան համաձայն, 2010թուականից ի վեր (այսինքն՝ Մաքսային միութեան գոյութեան ողջ ընթացքում) Հայաստանի արտաքին առեւտրաշրջանառութեան աւելի քան է-որդը տեղի է ունենում այդ միութեան անդամ չհանդիսացող երկրների հետ:

Զեկոյցը եւս մէկ ուշագրաւ դիտարկում է անում՝ «Խնդիրներ կ'առաջանան Առեւտրի համաշխարհային կազմակերպութեան շրջանակում»: Մինչդեռ Հայաստանի իշխանութիւնները յայտարարում են, թէ ԱՀԿ-ի հետ խնդիրները դժուար թէ առաջանան, եւ իրենք պատրաստ են բանակցել:

Իսկ խնդիրները կարող են առաջանալ հետեւեալ պատճառով,

որի մասին խօսում է նաեւ գեկոյցը. դառնալով ԱՀԿ անդամ՝ Հայաստանը պարտաւորուել է ունենալ ցածր մաքսատուրքեր, մինչդեռ Մաքսային միութիւնում մաքսատուրքերի չափը միջինը երկու անգամ բարձր են հայաստանեանից: Ընդ որում, գեկոյցը նշում է, թէ ԱՀԿ-ի հետ տարուելիք բանակցութիւններում որպէս բանակցող կողմ այլեւս Հայաստանը հանդէս չի գալու, այլ հանդէս են գալու Մաքսային միութեան երկրները՝ «համախմբուած ձեւով»:

Ամփոփելով գեկոյցը նշում է, որ Մաքսային միութեանը անդամակցելը «կ'ամրապնդի Հայաստանի տնտեսական դիրքերը», սակայն ընդգծում է. - «Թէ որքանով կը յաջողուի օգտագործել այդ ներուժը, մեծամասամբ կախուած է առանցքային խնդիրների լուծումից՝ տրանսպորտ, էներգետիկա, վրաստանի միջով երկաթուղային ու ավտոմոբիլային արտահանում, [Հայաստանի] ներդրումային գրաւչութեան բարձրացում»:

## ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՍԴՅԿ ՀԱՅ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՖՐԱՆՍԱՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԸՆԿ. ՍԱՐՈ ՄԱՐՏԻՐԵԱՆԻ ՀԵՏ

Հարց. Վերջերս ֆրանսայի նախագահ Ֆրանսուա Հոլանտ պաշտոնական այցելուի մը տուև Թուրքիա առաջին անգամ ըլլալով վերջին 22 տարուայ ընթացքին. ձեր կարծիքով ի՞նչ նպատակներ կը հետապնդէր այդ:

Այս այցելութիւնը կը միտէր ջերմացնել երկու երկիրներուն յարաբերութիւնները, որոնք կը գտնուէին սառած վիճակի մէջ, Նիքոլա Սարքոզիի յառաջ քաշած տեսակէտներուն պատճառներով: 2007ի երրորդ եռամսեակէն ի վեր, Թուրքիոյ Եւրոպական Միութեան անդամակցութեան բանակցութիւններուն սառեցումը, որուն պատճառներն էին, առաջին՝ Կիպրական հարցը եւ երկրորդ՝ Հայոց Յեղասպանութեան ժխտողականութեան դէմ օրէնքը, որ մետասաներորդ վայրկեանին կասեցուցաւ Ֆրանսական Սահմանադրական Խորհուրդին կողմէ:

Ֆրանսուա Հոլանտի այս ճամբորդութիւնը կը նկատուէր պատասխան մը Նիքոլա Սարքոզիի 2011 Հոկտեմբերին Հայաստան կատարած այցին եւ կը միտէր կանգնեցնել Թուրքիան վերոնշեալ պատճառներուն վերաբերեալ սակայն զգուշաւոր ձեւով:

Հարց. նախագահ Ֆրանսուա Հոլանտ յայտնեց թէ դժգոյս Թուրքիոյ անդամագրութեանը եւրոմիութեան:

Այո. ան թեր արտայայտեցաւ Թուրքիոյ Եւրոպական Միութեան անդամակցութեան բանակցութիւններուն վերսկսման, այդ պայմանաւորելով Ֆրանսայի մէջ կայանալիք հանրաքուէի մը, լաւ գիտնալով որ եթէ 2003ին ֆրանսացիներու 54%ը դէմ արտայայտուած էր Թուրքիոյ Եւրոպական Միութեան անդամակցութեան, այսօր այդ կը կազմէ 80%:

Հարց. Իսկ Հայկական Յեղասպանութեան ճանաչման գծով ռեւէ Եւրոմիութեանը կայի՞ն:

Ինչ կը վերաբերի Հայոց Յեղասպանութեան ժխտողականութեան դէմ օրէնքին, ան կ'ըսէ, «Յիշողութեան դատարարականութիւնը պէտք է կատարուի», «Օրէնքը պէտք է գերակայէ», եւ կ'աւարտէ ըսելով «կարելին պիտի ընենք յարգելու համար մեր եւրոպական պարտադրանքը, որ 2008էն ի վեր կը պահանջէ իւրաքանչիւր անդամ երկրէ պատժել յեղասպանութեան ռճիրին ժխտողականութիւնը, եւ պատշա-



ճեցնել զայն ֆրանսական օրէնսգիրքին, յարգելով համաշխարհային համաձայնութիւններն ու Սահմանադրական Խորհուրդին պահանջը»:

Ան, չափազանց ուշադիր էր: Չօգտագործելով «ցեղասպանութիւն» որակումը. փորձեց չվշտացնել Թուրքիան, հակառակ անոր որ նոյն ինքն Ֆրանսան, 2001 Յունուար 29ի օրէնքով ճանչցած էր Հայոց Յեղասպանութիւնը. նախագահը նաեւ հաստատեց թէ իրաւական գետնի վրայ կ'ուսուծուին պատիժի ենթակիցութիւն օրինագիծը:

Ֆրանսուա Հոլանտ փորձեց չվիրաւորել Թուրքիան, որուն հետ կը ցանկայ տնտեսական, ուժանիւթի եւ փոխադրութեան պայմանագիրներ ստորագրել: Միւս կողմէ Հրանդ Տինքի այրիին՝ Րաքելին հանդիպելով, լուեկայն կառչած մնաց մարդկային իրաւանց սկզբունքներուն, խօսքի ազատութեան եւ յիշողութեան դատարարականութեան:

Հարց.- Ի՞նչ է Հայ Եւրոպական Խորհուրդին կեցուածքը այս մասին:

Բնականաբար Հայ Եւրոպական Խորհուրդը կը դատապարտէ որ Նախագահ Հոլանտի պատգամը ուղղուած Թուրքիոյ, աւելի բացայայտ եւ վճռական չէր. կը դատապարտէ Թուրքիոյ Եւրոպական Միութեան անդամակցութեան բանակցութիւններուն վերսկսումը, հակառակ անոր որ Թուրքիա գրաւած կը պահէ Կիպրոսի Եւրոպական Միութեան անդամ երկրի մը տարածքին կէսը, որ Թուրքիա փակ կը պահէ իր սահմանը Հայաստանի հետ եւ կը շարունակէ Հայկական Յեղասպանութեան հանդէպ իր ժխտողական քաղաքականութիւնը:

## ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

### ՍԵՌԻՏԱԿԱՆ ԱՐԱԲԻԱ: ՀԱԿԱ-ԱՅԱԲԵԿՉԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

Տուպայէն ստացուած լուրերուն համաձայն Սէուտական Արաբիոյ Ապտալլա թագաւորը նոր հրամանագիր մը ստորագրած է, որուն համաձայն որեւէ քննադատական եւ վիճելի ելոյթ հակա-ահաբեկչական արարք կը նկատուի եւ ենթակայ կ'ըլլայ դատաւարութեան: Նոր օրէնքի համաձայն վերոյիշեալ արարքը պետութեան դէմ ըմբոստութիւն եւ ահաբեկչական գործունէութիւն կը համարուի: Այսպիսով կ'արտօնուի ոստիկանութեան որպէսզի առանց հրամանագրի տուններու խուզարկութիւն կատարեն:

### ՔԻՄԻԱԿԱՆ ՁԵՆՔԵՐՈՒ ՅՐԴ ԽՈՒՄԲԸ ՓՈՒՍԱԴՐՈՒՄԸ

Հոլանտական աղբիւրներու համաձայն Սուրիա երկրէն դուրս փոխադրած է քիմիական զէնքերու երրորդ խումբը, իսկ զէնքերու ուրիշ քանակութիւն մըն ալ կազմալուծուած է տեղւոյն վրայ: Նմանապէս Քիմիական զէնք արտադրող սուրիական գործարան մը քանդուած է: Նշենք նաեւ որ քիմիական զէնքերու արտասահման փոխադրութիւնը կատարուած է Լիբանանի վրայով:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱՊԱՐՄԱՆՄԱՆ ԽՂՈՒՄԻ ՎԻՃԱԿԸ

### ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒԻ ԴԱԻԹԵԱՆ

Հայկական Վերածնունդ (Armenian Renaissance) շարժումի Թորոնթոյի շրջանակը, քանի մը հաւաքներ կազմակերպած էր անցեալին, բացատրելու եւ ներկայացնելու համար, թէ ինչպէս պիտեւք հայութիւնը կրնայ մասնակից դառնալ Հայաստանի մէջ տարուող քաղաքացիական իրաւունքներու կամ բարենորոգումներու ձեռքբերման աշխատանքներու յաջողութեան մէջ:

Այս առնչութեամբ, եւ որպէսզի սիւրբաբար տեղեակ դառնայ իր հայրենիքի մէջ կատարուող հայրենաքանդումի անտարբեր պետական կեցուածքին, Ուրբաթ օր, Յունուար 31-ի երեկոյեան ժամը ութին, Թորոնթոյի արուարձաններէն Րիչմոնտ Հիլ կոչուող շրջանի Եօթ Գիւնեմազ սրահին մէջ, Հայկական Վերածնունդը ցուցադրեց վաւերագրական ֆիլմ մը՝ «Հայաստանի Կոտորուող Ողնաշարը» անունով, որ պատրաստուած էր Հայաստանի բնապահպանման խղճալի վիճակով մտահոգ մարդոց կողմէ, որոնք կազմած են Համահայկական Բնապահպանութեան ձախտ (ՀԲՃ) կոչուող մարմին մը:

Ֆիլմը շատ ցաւալի իրավիճակի մը առջեւ կը դնէ հանդիսատեսը: Հայաստանի տարբեր շրջաններու մէջ կատարուող հանքային պեղումներու հետեւանքով ստեղծուած ահռելի վիճակ մը գոյութիւն ունի այսօր: Հայրենի գետեր եւ հովիտներ, կանաչապատ արտեր, հանքագործողներ, արածող մաստու եւ կաթնատու կենդանիներ, հանքերու արտադրած կամ արձակած թունաւոր հոսանքներու (Carcinogenic by-products) պատճառով վիճակուած են փճանալու կամ մեռնելու, որպէս հետեւանք պետութեան սանձարձակ եւ անհոգ քաղաքականութեան:

ՀԲՃ-ի խօսնակներէն Սիւզի Պետրոսեանը եղածը կը բնութագրէ որպէս "շարունակութիւն ցեղասպանութեան": Մորթային (dermatological), ջղազրգուական (neurological), շնչառական (respiratory), եւ քաղցկեղի (cancerous) այլազան հիւանդութիւններ նշմարելի թափով կ'աճին հայրենի բնակչութեան մօտ որպէս հետեւանք այդ թունաւոր հոսանքներէն ծնած վիճակին եւ մթնոլորտին:

### ԵԳԻՊՏՈՍ

Եգիպտոսի դատական իշխանութիւններու համաձայն, Փետրուարի 20ին պիտի սկսի քաննելու դատաւարութիւնը: Անոնք կ'ամբաստանուին տերորիստներու խումբի մը մասնակցած ըլլալու մեղաւորութեամբ: Անոնց մէջ կան չորս օտարահայտակներ, որոնք գործակցած են Քաթարի մէջ հաստատուած «Ալ Ճազիրա» տեղեկատու գործակալութեան հետ: Ամբաստանեալները կը մեղադրուին տերորիստական խումբի մը մասնակցած ըլլալու եւ երկրի ապահովութիւնը վտանգած ըլլալու յանցանքով:

Ամբաստանեալներէն ութը հոգի արդէն բանտարկուած են իսկ մնացեալ 12 անձերը պիտի դատուին ի բացակայութեան:

«Ալ Ճազիրա» բացայայտութիւնը կը հերքէ եղած ամբաստանութիւնները, յայտնելով թէ վերոյիշեալ լրագրողները իրենց պարտականութիւնները կը կատարէին միասին:

### ԼԻԲԱՆԱՆ: ՀՐԹԻՈՆԵՐ ԱՐՉԱԿՈՒՄԸ ԴԵՊԻ ԻՍՐԱՅԷԼ

Միջազգային լրատու գործակալութեանց համաձայն անցեալ շաբաթավերջին Հարաւային Լիբանանէն հրթիռներ արձակուած են դէպի Հիւսիսային Իսրայէլ: Իսկ փոխադարձաբար Իսրայէլ հարուածած է Ռաշայայի շրջանը:

Միւս կողմէ Լիբանանի առժամեայ վարչապետ Նէժիպ Միզաթի, Սոչիի մէջ ողիմպիական խաղերու բացման արարողութեան ներկայ գտնուելէ ետք, այժմ Պէյրութ վերադարձած է եւ կը զբաղի նոր դաշինքի վերակազմութեան հարցով:

Ֆիլմը ցոյց կու տայ թէ ով կը շահագործէ եւ ինչպէս կը շահագործուի մեր հայրենիքի բնական հարստութիւնը. ցոյց կու տայ թէ ինչ տեսակ մթնոլորտային հարցեր կը ծագին եւ առողջապահական խնդիրներ կը բարդուին որպէս հետեւանք Հայաստանի բնական հանքային հարստութեան ծայրայեղ եղանակի շահագործումէն. եւ կը խօսի թէ ինչու՞ ոչ պետական հանքային ընկերութիւններ արագօրէն կ'աճեցնեն իրենց պեղումները:

Ընկերային եւ տնտեսական մարզերու մէջ արձանագրուած վնասներու շարքին կը նկատուի:

Հողատարածքի բռնի վաճառքը հանքային ընկերութիւններուն կողմէ առանց պատշաճ եւ արդար հատուցումի:

Բացարձակ անտեսում տեղական արժէքի եւ ապրելակերպի, հանքային ընկերութիւններու կողմէ:

Հանքագործներու եւ տեղացի բնակիչներու առողջապահական կամ բժշկական ապահովագրութեան չգոյութիւն:

Բնակարաններու արժէքագրուում պայթումներէն եւ տեւական շարժումներէն յառաջացած քանդումի պատճառաւ:

Այսպիսի ահռելի ազգային աղէտի առաջը առնելու համար, ֆիլմը պատրաստող բնութագրական ճակատը (ՀԲՃ) ահազանգ կը հնչեցնէ, պահանջելով որ բոլոր հանք արտադրող ընկերութիւններու արտօնագրերը վերատեսութեան ենթարկուին, եւ հաշիւ կատարուի անկախ եւ անկողմնակալ մասնագէտներու կողմէ ճշդելու համար ծախսերն ու շահերը ամէն մէկ հանքային գործողութեան: Եւ վերջապէս, կ'առաջարկուի որ լրիւ եւ ամբողջական ուսումնասիրութիւն կատարուի որդեգրելու համար ազգային շահերով գործող աշխատածեւ մը, որ լաւագոյն ձեւով շահագործէ մեր հանքային հարստութիւնը:

Ֆիլմի ցուցադրութեան Ներկայ եղողները ինձի պէս, կը խորհիմ որ գլխահակ դուրս գալով սրահէն, հարց տուին թէ ինչպէ՞ս կրնային որպէս սիւրբաբար օգտակար դառնալ բնապահպանման ճակատ կազմող մեր հայրենի եղբայրներուն, ինչ որ կը փափաքին մեզի մղել տալ Հայկական Վերածնունդի մարդիկը Թորոնթոյի: Արդեօք ինչպէ՞ս...

# «ՔՈՉԱՐԵԱՆԻ 10 ՏԱՐԻՆԵՐԸ ՄԵՋ ՀԱՄԱՐ ԿՈՐՍՈՒԱԾ, ՆՈՅՆԻՍԿ ՎՆԱՍԱԿԱՐ ՏԱՐԻՆԵՐ ԷՆ՝ Ե՛Ւ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ Ե՛Ւ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ»

«Իրատես de facto»-ի գրուցա- կիցն է 1994-1997 թուականներին ՀՀ նախագահի առաջ խորհրդակա- ն ժԻՐԱՅՐ ԼԻՊԱՐԻՏԵԱՆԸ:

-Հայաստանը արագ քայլերով գնում է դեպի ՄՄ այն պարագայում, երբ անգամ որոշ ռուս պաշտոնեաներ իրենք էլ զարմացած են Հայաստանի վազքից: Ըստ Ձեզ, ի՞նչ է այսօր տեղի ունենում, այս շտապողականությունը ինչն է պայմանավորում:


-Հայաստանի այսօրուայ իշ- խանութիւնները ԼՂ-ի իշխանու- թիւնների հետ Հայաստանի անկա- խութիւնն ու ԼՂ-ի ճակատագիրը գործնականում յանձնում են Ռու- սաստանին եւ դա անում են որպէս կաշառք: Սա քաղաքական մշակոյթ- թի ոճ է եւ ոչ թէ պետութիւնների միջեւ որեւէ ձեւի բանակցութեան:

-Մաքսայնացուելու ընթացքին զուգահեռ խօսուում է Ատրայժմանի՝ Հայաստանի վրայ հնարաւոր յար- ծակման մասին, որը հրահրում է Ռու- սաստանը, եւ որն այնքան էլ անհա- ւանական չէ: Ստացուում է, որ ՄՄ-ին անդամագրուելը անվտանգութեան հետ կապ չունի՞:

-Մենք ծանօթ էինք այն վտանգ- ներին, որոնց մեր պետութիւնը դիմագրաւում էր: Դրա համար էլ Ռուսաստանի հետ ունենք պաշտ- պանութեան ուժեղ պայմանագիր ու պայմանաւորութիւններ: Այդ ի՞նչ նոր վտանգ էր, որը մեզ պարտադրում էր նման զիջումներ անել: Ճիշտ կը լինէր, որ ովքեր խօսում են անվտանգութեան գոր- ծօնի մասին, պարզաբանեն այդ նոր վտանգի էությունը:

Կաշառք է գնում: Այլ կերպ դժուար է բացատրել այս նոր զիջումները: Սերժ Սարգսեանը ՄՄ-ի մեր անդամակցութիւնը կա- պեց անվտանգութեան գործօնին: Իսկ ի՞նչ էր պատահելու: Թուրք- իան յարձակուելու էր Հայաստանի վրայ ու Ռուսաստանը մերժելու էր կատարել ՀՀ-ի նկատմամբ իր յանձնառութիւնները: Կամ Ատր- պէյճանը յարձակուելու էր ԼՂ-ի վրայ ու Ռուսաստանը նրան եւս 4 մլրդ տոլարի գէ՞նք էր վաճառելու: Բայց թուրքիան չէր յարձակուում, իսկ Ռուսաստանն էլ երբեք Ղարա- բաղը մեզ չի խոստացել ու չի խոստանալու: Բազարի մակարդա- կը, որը տեղի է ունեցել, պահան- ջում է, որ մեր իշխանութիւնները յստակօրէն ասեն, թէ որն է այդ վտանգը եւ որտեղից է սպասում: Առայժմ տպաւորութիւն է, թէ դա միմիայն Մոսկուայից եկած սպառ- նալիք էր, եւ մերոնք փորձում են պարզապէս կաշառել Ռուսաստա- նին: Սակայն այդ երկիրը շատ աւելի մեծ ինքնասիրութիւն ունի կաշառք ընդունելու համար: Այն, ինչ տալիս ենք, նա համարում է իր բնական իրաւունքը:

ՀՀ իշխանութիւնների մօտե- ցումը անդունդի եզրին հասած մարդու վերաբերմունք է, սակայն մարդու, ով 15 տարի է՝ մերժում էր, որ քայլում է դէպի անդունդ կամ որ նոյնիսկ չէր ընդունում, թէ անդունդ կար մի քանի քայլ ան- դին: Այդ բոլորը գործող նախա- գահն անում է իշխանութիւնը պա- հելու եւ ոչ թէ որեւէ հարց լուծելու համար, իսկ Ռուսաստանի համար սա պետական քաղաքականութեան հարց է: Ռուսաստանի պարտադ- րած դաժան պայմանները, հարա- ւոր է, բխում են իր շահերից: Սակայն եթէ իր շահերի պատճա- րով նա նման պայմաններ է պար-



տադրում իր «դաշնակցին», դա մտածելու տեղիք է տալիս:

-Ինչպէ՞ս հասանք այստեղ: Սխալ հաշուարկների արդիւնք էր, թէ՛ սխալ դիւանագիտութեան:

-Վերջին 15 տարիներին մեր իշխանութիւնները հետեւեցին մի նոր ուղղութեան: Ի տարբերու- թիւն առաջին նախագահի շրջանի ղեկավարութեան, նոր իշխանա- ւորները վստահ էին, որ մենք ունենք բոլոր միջոցները պահելու այն, ինչ ձեռք էինք բերել մինչ այդ. ՀՀ-ի անկախութիւնը, ԼՂ-ն եւ նրա շրջակայ տարածքները, էներ- գետիկ ու տնտեսական ճգնաժամե- րի մասնակի կամ ամբողջական յաղթահարումը, ու այդ բոլորին աւելացնելու տնտեսական երկա- րաժամկէտ աճ: Աւելին՝ նրանք վստահ էին, որ դա կարելի էր անել առանց որեւէ հարց լուծելու Ատր- պէյճանի ու Թուրքիայի հետ, առանց մասնակցելու տարածաշրջանի հար- ցերի լուծմանը կամ տարածաշր- ջանը ներառող ծրագրերի մաս- նակցութեան:

Յստակ է, որ վերջին 15 տա- րիների քաղաքականութիւնը ձա- խողութ է: Տարբեր կողմեր՝ արեւմտ- եան, ռուսական, թերեւս նաեւ իրա- նական, որոնց շահերը համընկնում էին քաղաքական ամբիցիա ունեցող մեր ներքին որոշ ուժերի շահերի հետ, ապահովեցին, որ այս սխալ հաշուարկ արած ու Հայաստանի շահերին վնասակար քաղաքակա- նութիւն հետապնդող մարդիկ շա- րունակեն մնալ իշխանութեան գլուխ: Որքան ժամանակ որ այդ դրսի ուժերը կարող էին շահագործել ներսինների տեղադրեցած ու իշխա- նական շահերը, այդ համագործակ- ցութիւնը հնարաւոր էր:

Հարցը մեր դիւանագէտների պրոֆեսիոնալիզմի պակասը չէ, այլ այն, թէ նրանք ինչ պատուէր էին ստացել իրենց ղեկավարներից: Փաստն այն է, որ հասել ենք այնտեղ, որ, ինչպէս քանիցս ասել եմ, Հայաստանն արդէն այլընտ- րանքներ չի տեսնում արտաքին քաղաքականութեան մէջ: Երբ այ- լընտրանք չունենք, նշանակում է այլեւս կարիք չունենք դիւանագի- տութեան ու դիւանագէտների, որով- հետեւ այլեւս կարիք չունենք ար- տաքին քաղաքականութեան:

-Սա նշանակում է, որ մտել ենք փակուղի: Այլեւս անելիք չունենք, Հայաստանը որպէս արտաքին քա- ղաքական ինքնուրոյն միաւոր այ- լեւս արժէք չի՞ ներկայացնում:

-Ոչ, այդպէս չեմ կարծում, սակայն, որպէսզի դուրս գանք այս իրավիճակից, անհրաժեշտ է մեր վերջին տարիների սխալներին անդ- րադառնալու քաջութիւնն ունե- նալ: Առաջին. պէտք է լուծէինք մեր

հարցերը մեր հարեւանների հետ՝ նուազեցնելով նրանց կողմից վտանգ- ներն ու Ռուսաստանից կամ որեւէ այլ պետութիւնից խոր կախուած լինելու անհրաժեշտութիւնը: Երկ- րորդ. պէտք է յստակ տեսնել, որ կոմպլեքսնտարութեան յրացքը, որը Քոչարեանի արտաքին քաղաքակա- նութեան «մեծ գիւտն» էր՝ Ռուսաս- տանից կը ստանանք անվտանգու- թիւն եւ Արեւմուտքից՝ տնտեսական զարգացում, մի մեծ փուշիկ էր:

Այսօրուայ անվտանգութեան համակարգ ասուածը անվտանգու- թիւն չէ, երբ իրականում նուազա- գոյն ճնշման տակ տալիս ենք մի յաւելեալ բան, որը մեզ համար բացարձակ արժէք պիտի լինէր: Այսօր անվտանգութեան համակարգ ենք անուանում մի հասկացութիւն, որը իրականութեան մէջ ռեֆլեքսիւ մտավորժանք է: Անվտանգութիւն ասուածը այնքան ենք պարզեցրել, որ կարելի է երկու բառով ներկա- յացնել. ցեղասպանութիւնից՝ Ռու- սաստան: Այնքան պարզ է, որ չի յոգնեցնում միտքը, մեր չարչրկուած միտքը: Այդ բառակապակցութիւնը մեր յոգնած ուղեղներին ու անա- ւարտ պայքարներին տալիս է մի նոր հանգստութիւն: Հանգստութիւն, որն այս առումով կարծես ունէինք սովե- տի ժամանակ՝ գոնէ արտաքին հար- ցերի կապակցութեամբ:

-Եւ, ուրեմն, հարց է ծագում, որը գուցէ տրիվիալ թուայ. ո՞րն է ելքը:

-Երկու ձեւ կայ, ըստ իս: Առաջին. իշխանութիւնները կը փոխուեն, որը լուրջ փոփոխու- թիւն կը մտցնի արտաքին քաղա- քականութեան ու անվտանգութեան մօտեցումների մէջ: Երկրորդ. Սերժ Սարգսեանն ինքը կը համոզուի ու իր շրջապատին կը համոզի, որ այս կուրացած քաղաքականութիւնը շա- րունակելու պարագայում նրանք երկիրն ու ժողովուրդը տանելու են անյուսուցեան, ծայրայեղ գաղա- փարախօսութիւնների զարգացման, ըստ էության, անկախութեան կորս- տի եւ լայն իմաստով՝ մեր ժողովր- դի ստորացման: Եթէ նա հասնի նման զգացողութեան, կը հրաւիրի մի պետական մակարդակի ու պե- տական մտածողութեամբ խորհր- դակցութիւն, որպէսզի երկիրը մի- անաբար դուրս գայ այս իրավի- ճակից: Այս գաղափարի մանրա- մանները մէջ չեմ մտնում, թէ եւ իմ կարողութեան սահմանների մէջ լրջօրէն մտածել եմ այդ մասին: Նաեւ մի հարցրէք, թէ այս երկու լուծումների հաւանականութիւն- ները որքան են:

Հիմնական հարցը այսօր հե- տեւեալն է. կարո՞ղ են 2014-ի մեր իշխանաւորներն ու նրանց հակա- ռակորդները անել այն, ինչ մի հազարամեակ, նոյնիսկ 1500 տարի առաջ մեր թագաւորները, իշխան- ներն ու կաթողիկոսները չկարողա- ցան անել: Այն է՝ վերանալ իրենց անմիջական, ինստիտուցիոնալ, մասնաւոր շահերից ու մտածել պետականօրէն՝ ի շահ մի պետու- թեան, ինչը, ի վերջոյ, ծառայի ժողովրդին:

-Իսկ որտե՞ղ է սփիւռքը այս բո- լորի մէջ: Սփիւռքը լուում է, կարծես իր երազների հայրենիքը դրախտա- վայր դառնալու ճանապարհին է: Սփիւռքի լուուիւնը արդէո՞ք նշա- նակում է, որ հաշտ է հայաստանեան իրավիճակի հետ:

-Սփիւռքի կառույցների ու կազ- մակերպութիւնների լուութիւնը

մարդու ականջ է իւլացնում: Ո՞ւր են այն մարդիկ ու կազմակերպու- թիւնները, որոնք մի 15-20 տարի առաջ աղմուկ էին բարձրացնում ամենամանր հարցի կապակցու- թեամբ անգամ: Ո՞ւր են այն շքան- շանակիրները, ում համար ստեղծ- ուել է սփիւռքի նախարարութիւնը, այն մարդիկ, ովքեր պետութիւնից ստացել են պատիւները, բայց այ- սօր լուում են, երբ այս իշխանու- թիւնները ծախում են պետու- թիւնն ու պատանդ դարձնում այն ժողովրդին, ում համար այդ պե- տութիւնն ստեղծուել է:

Ինձ համար բացատրութիւնը պարզ է. երբ հարցը վերաբերում է Ռուսաստանին, սփիւռքը անմիջա- պես փոխում է, այսպէս ասած, իր «software»-ն ու ենթարկում մի այլ տրամաբանութեան, որը շատ մտածել չի պահանջում: Երբ լուում ենք ցեղասպանութիւն-անվտանգու- թիւն-Ռուսաստան բառակապակ- ցութիւնը, ոտքներս թուլանում են, դատողութիւնը՝ առկախում: Մեզ լաւ են պատրաստել, մենք էլ լաւ սովորել ենք: Մանաւանդ սովորել ենք այդ բոլոր հակասութիւնները համադրել ինչ-որ ազգային, սու- պերպատրիոտիզմի, անվտանգու- թեան իդեոլոգիայի վերածուած բանաձեւերի մէջ: Բայց դրանք քաղաքականութիւն կամ դիւանա- գիտութիւն կարող են դառնալ միայն ի հեճուկս մեր պետականու- թեան ու ժողովրդի շահերի:

Ռուսաստանին թէ՛ թերագնա- հատելը, թէ՛ գերագնահատելը մեզ հասցնում են մեր շահերի ու ռազ- մավարութեան սխալ գնահատման կամ ձեւաւորման, որը վնասում է մեզ: Նոյնքան վնասակար է ինք- ներս մեզ թերագնահատելը: Սա- կայն կարծես սփիւռքը վերադառ- նում է 1980-ականների հոգեբա- նութեանը, որը թելադրում էր, թէ Ռուսաստանից դուրս՝ «չիք փրկու- թիւն»: Դա չէ՞ր գլխաւոր պատճա- րը, որ սփիւռքի մի կարեւոր, յատկապէս կազմակերպուած մասը 1988-1991 թուրքին դէմ էր Հայաս- տանի անկախութեանը: Սփիւռքին անհրաժեշտ էր լուծել ոչ թէ Հա- յաստանի եւ Հայաստանի ժողովր- դի ապագան, այլ այն հոգեբանա- կան հակասական իրավիճակները, որոնց դէմ հանդիման էր կանգնել իր նիւթական ու կառուցային հար- ցերը լուծելուց յետոյ: Այսինքն՝ ինչպէս զգալ լաւ էր ու նոյնիսկ հայ դատի պաշտպան եւ միեւնոյն ժամանակ մնալ սփիւռք, մնալ սփիւռքում ու վայելել նրա առա- ւելութիւնները՝ առանց պատաս- խանատուութիւն վերցնելու: Սփիւռք- քին պէտք էր պարզ բանաձեւ, եւ այդ լուծումը նրան առաջարկուել էր Ռուսաստանի պատկերով: Իսկ հիմա կարծես սփիւռքը վերընկա- լում է այդ նոյն լուծումը: Մէկ անգամ եւս սփիւռքը որպէս քաղա- քականապէս մտածող գործօն ան- դամաւորւած է եւ ասելիք չունի:

-Սեկ միջանկեալ հարց ունեմ, որն անցած տարուայ վերջին խօ- սակցութիւնների տեղիք տուեց Հա- յաստանում: Թուրքիայի »Ազգային շարժում« կուսակցութեան փոխնա- խագահ Ռուրդուլ Թիւրքեշմ ի պա- տասպան իր հօր՝ Արփարաւան Թիւր- քեշի հասցեին հնչած մեղադրանքնե- րի, թէ վերջինս 1993-ին հանդիպել է Լեւոն Տէր-Պետրոսեանի հետ, ասել էր իբր այդ ժամանակ իր հայրը Տէր-

### ԱԶԵՐԻՆԵՐԻ ՈՍԿՈՒ ՓԱՅԼՆ ԷԼ ՍԵՒ Է

#### ՍԱՄՈՒՅԼ ԿՈՍԵԱՆ

Ազերիների կառավարութեան տարրուայ անդրանիկ նիտում Ալի-եւի հերթական ելոյթը, բացի ադրբեյջանական ոճի ստանդարտ մեկնաբանութիւններից, այս անգամ այլ դրսեւորումներ էլ ունէր, ըստ որի՝ դարաբաղեան հակամարտութեան հետ կապուած՝ «որոշակի յոյսեր, որոշակի լաւատեսական պահեր կան, եթէ Հայաստանում գերակշռեն իրատեսական մտեցումները» իրատեսականի պարագայում նկատի ունենալով, որ Հայաստանը «պէտք է յենուի իրականութեան, իրական ուժերի չարաբերակցութեան վրայ, իսկ Ատրպէյջանի աճող հզօրութիւնը այստեղ իր դերն է խաղում եւ խաղալու է», որ երկու երկրների միջեւ համեմատութիւն անցկացնելու դէպքում իր երկրի առաւելութիւնը զգալի է բոլոր ոլորտներում:

Հետեւելով Ալիեւի տրամաբանութեանը՝ պիտի ենթադրել, որ ապագայում թելադրող Ատրպէյջանն է լինելու, քանի որ իրենք ուժեղանում են, Հայաստանը թուլանում է... Արդեօք իրականութիւնը համարժէ՞ք է Պաքուի իշխանութեան լաւատեսութեանը, իրականութիւն, որը մի շարք իշխանաւորների կողմից որպէս ատրպէյջանական ժողովրդի «ոսկէ դարաշրջան» է որակուած: «Մինվաչազ» ատրպէյջանական պորտալի իր յօդուածում Զիյադ Գարախանլին հարցնում է, թէ ինչպէս են «Գուբա եւ իսմայիլ քաղաքների սոցիալական անկարգութիւններն ու դժգոհ քաղաքացիների բազմամարդ բողոքները համադրուած «ոսկէ» համոզմունքի հետ: Ինչպէ՞ս կարելի է ներկայիս ժամանակահատուածն անուանել «ոսկէ դարաշրջան», երբ Ատրպէյջանի միլիոնաւոր քաղաքացիներ գումար հաշթայթելու, աշխատանք գտնելու եւ լաւ կեանքով ապրելու համար ստիպուած են դեգերել տարբեր երկրներում: «Ոսկէ դար» ապրող երկրում որտեղից այսքան մուրացկաններ, աղքատներ, անօթեւաններ, գործազուրկներ, հարբեցողներ, թմրամոլներ, մարմնավաճառներ, հանցագործներ եւ այլք:

-Անցեալները հինգ հազար դրամի լեցուցի (Հեռախօսը- Ս. Ա.) խօսեցայ իրենց հետ: Կշտացայ բոլորէն: Եղբայրներուս, քոչրիկիս ամէնուն հետ խօսեցայ: Երագիս եկած էին բոլորը: Ես կ'ըսէի, դուք ձեզի լաւ նայեցէք, իրենք կ'ըսէին, դուն քեզի լաւ նայիր ասանկ: Հոս ինչ պիտի ըլլանք: Չեմ գիտեր չոճուխներուս ապագան քանդուե-ցաւ: Հոս շատ կ'աշխատիս, քիչ կ'առնես կոր: Ինծի նորէն օգնեցին, աս փուռը բերին, լուացք փռելիք բերին: Ստուարանն ալ դրացիներ-րուն հետ միասին կը գործածենք:

Ուրիշ միութիւններ ալ օգնեցին, անունները չեմ ալ գիտեր: Լուաց-քի մեքենայ չունիմ, հիմա տան-տէրը հին բան մը տուաւ: Երէկ Լուացք պիտ ընէի, սառած էր: Ելայ մեքենան շալկեցի, դարձցուցի, որ կրնամ աշխատցնել:

Միւս սենեակը ցոյց տալով կը յիշէ բոլոր այն անունները, որ իր Հալէպ եղած ատները խոստացան որ պիտ օգնեն ... բայց ... ոչինչ ըրին: Լուացքի մեքենան ցոյց կու-տայ, սառնարանը եւ բաց ծորա-կը: Կը բացատրէ որ ծորակը եթէ բաց չթողու, ջուրը կը սառի:

- Այդ օրը ջուրը սառաւ:Գա-ցի վառարանը բերի խողովակնե-րուն մօտեցուցի որ հալի: Դիմացն ալ հարեւաններ ունիմ: Սեւանէն եկած են: Աշակերտ են. ինչ ըսեմ:  
- Քեզի կ'օգնե՞ն:

- Չէ, իրենք ալ լաւ չեն: Հազիւ-հազ կ'ապրին կոր: Իրենց մաման ալ կ'աշխատի:

Ու մեզ ճամբու դնելով կ'ըսէ. «Երբեմն կու լամ, կուլամ, ես Աստուած կ'ըսեմ, մեզի պահէ կ'ըսեմ: Մէկը չունիմ մամաս, եղբայրներս ալ ըսին.- ո՞ւր կ'երթաս կոր մէկը ունի՞ս մը հոն»:

Տիկին Մարալ կը մնայ իր կիսաբաց ու նախնական պայ-մաններով տան մէջ: Տեսնես քա-նի- քանի Տիկին Մարալներ կան այս ուրախ ու տխուր Երեւանին մէջ:

**ԴԱՇՆԱՄՈՒՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ**  
Մանրամասնութեան համար գաւեգել  
Նաքինէին  
(626) 818-9949  
Հասցէ՝ 1060 N. Allen Ave., Pasadena, CA 91104

### ԳՐՈՂԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ ՈՒԻԼԻԱՍ ՍԱՐՈՅԵԱՆ

«ԳՐԱԿԱՆ ԹԵՐՐԻ» արխիվից (Պարունակուած մատյանից)

Քսան տարի առաջ այս նոյն օրը՝ Հոկտեմբերի 13-ին, հենց «Քարթլիցի», 348-ում էր, որ բացեցի «Ռանդոմ Հաուս» հրատարակչությանը ուղարկուած փաթեթը եւ տեսայ իմ առաջին գրքի օրինակը: Գրողը տանի, էդ ինչ պահ էր: Ես այնքան էի յուզուել, որ չկարողացայ փաթեթել «Բուլ Դարհամ» սիրգարեստ: Երեք անգամ փորձելուց յետոյ վերջապէս փաթեթեցի ու սկսեցի ծուխը ներս քաշել ու արձակել՝ փոքր-ինչ խենթացած, երբ գննում էի այդ անհեթեթ ու գրեթէ անհաւատալի արուեստի գործն ու ապրանքը: Ինչպիսի գիրք, ինչպիսի կազմ, ինչպիսի տիտղոսաթերթ, ինչպիսի բառեր, ինչպիսի լուսանկար. հիմա նայէք, թէ կանայք ինչպէս են խոնուում դրա շուրջը: Քանի որ երիտասարդ գրողը գիրք է գրում՝ ակնկալելով, որ սիրուն կանայք կը խոնուեն դրա շուրջը:

Աւաղ, խոնուողները հագուադէպ են սիրուն լինում: Սա մի առեղծուած է, որ շարունակում է մոլորեցնել ինձ: Սիրուն կանայք խոնուում են փոքրամարմին, գիրուկ տղամարդկանց շուրջը, ովքեր փոքր բիզնեսի տէր են: Նրանք խոնուում են այն մարդկանց շուրջը, ովքեր տարբեր հիւանդութիւններ են բուժում՝ մասներով ուղղելով յօդերը եւ երկար-բարակ պատմելով իրենց ձեռքբերումների ու հետաքրքիր դէպքերի մասին: Նրանք խոնուում են այն երիտասարդների շուրջը, ովքեր սեւ վերնաշապիկ են հագնում եւ հինգ կոնակ ունեն սպորտային վերնազգեստի թեւքերին, ովքեր որեւէ տեսանելի ապրուստի միջոց չունեն եւ ժամեր շարունակ սիրալիք շաղկարատում են անցեալ երեկոյի մի անհեթեթ տափակութեան շուրջ այնպէս, կարծես թէ այն պատմական իրադարձութիւն լինէր:

Սիրուն կանայք խոնուում են բոլորի շուրջը՝ բացի գրողներից: Պարզ, խելացի կանայք մասամբ խոնուում են գրողների շուրջը:

Բայց ես շտապեցի տպագրել իմ առաջին գիրքը ոչ միայն այն պատճառով, որպէսզի սիրուն կանայք խոնուեն դրա շուրջը: Խնդիրը միայն դա չէր:

Ես նաեւ մտադիր էի արմատապէս յեղաշրջել ամերիկեան գրականութիւնը:

Երեւնականների սկզբին «յեղաշրջել» բառը մեծ ժողովրդակաճութիւն էր վայելում եւ, ընդհանուր առմամբ, յարգարժան էր, բայց ամերիկեան գրականութիւնը յեղաշրջելու իմ յաջողութիւնն այսօր կարելի է չափել միայն մի առանձնաչատուկ ընտրութեամբ, որ մոգունել է մի առանձնաչատուկ վիճակագիր: Թէ՛ ձեւացնենք, որ իմ ստեղծածն ամենեւին ազդեցութիւն էի թողել ամերիկեան գրականութեան վրայ, այնուհանդերձ, ճիշտ է լինի: Խնդիրն այն է, որ իմ գրականութիւնը մեծ մասամբ ազդել է անտիպ գրողների վրայ, որոնք այդպէս էլ մնացին անտիպ, ուստի նման ազդեցութիւնը չափելը մեծ երեւակացութիւն եւ համարձակութիւն է պահանջում: Այն լաւ գրողները, որոնց վրայ ազդել է իմ ստեղծագործութիւնը, արդէն տպագրուած էին, ուստի նոյնիսկ վաղուց էին տպագրու-

ում, բայց ճշմարտութիւնն այն է, որ իմ ստեղծածը հաստատ ազդել է նաեւ նրանց գրականութեան վրայ, քանի որ գրեթէ անմիջապէս ես սկսեցի նկատել բարելաւումը: Ես դանկատեցի ո՛չ միայն կարճ պատմուածքներում, այլեւ վէպերում, պիեսներում եւ, նոյնիսկ, կինոնկարներում:

Ի՞նչ ունէր իմ գրականութիւնը, որ կարող էր օգտակար լինել գրելուն ընդհանրապէս:

Ազատութիւն: Կարծում եմ՝ ես ապացուցել եմ, որ եթէ գրող ունէք, ուրեմն գրականութիւն ունէք, եւ որ գրողն ինքը, քանի դեռ չի դադարել գրել կամ չի մահացել, աւելի մեծ կարեւորութիւն ունի, քան իր գրականութիւնը:

Այսպիսով, եթէ գրող ես, ստիպուած չես սպանել քեզ ամէն անգամ, երբ պատմութեմք, պիես կամ վէպ ես գրում:

Իսկ ես ինչո՞ւ եմ ցանկանում յեղաշրջել ամերիկեան գրականութիւնը:

Ես պէտք է յեղաշրջել, քանի որ այն ինձ դուր չէր գալիս, եւ ես ցանկանում էի յեղաշրջել:

Եւ ինչո՞ւ, որպէս գրող, չէի կամենում լուրջ գործել: Մի՞թէ չգիտէի, որ խոշոր քննադատները կ'երկնչէին գրել իմ գրականութեան մասին, քանի դեռ լուրջ չեմ գործել: Գիտէի: Ես հրաժարուեցի լուրջ գործելուց, քանի որ լուրջ չէի գրում: Ես չէի գրում, որ պարտաւոր եմ լուրջ կամ, նոյնիսկ, արժանապատիւ գրածը լոկ մի ստուեր է, որ ծագում է գոռոզամիտ լինելուց: Որոշ գրողներ բնականօրէն լուրջ, արժանապատիւ կամ գոռոզամիտ են, բայց դա չի նշանակում, թէ նրանք նաեւ բնականօրէն մեծ կամ, նոյնիսկ, ազդեցիկ են:

Պարզապէս որեւէ առեղծուածային կապ չկայ լրջութեան եւ մեծ գրականութեան միջեւ: Որոշ մեծ գրողներ մեծ լրջութիւն են ունեցել, բայց մեծ մասը գրեթէ լրջութիւն չի ունեցել: Նրանք այլ բան են ունեցել:

Ո՞րն է այդ ուրիշ բանը:

Ես կարծում եմ՝ դա այն սեւեռուն գաղափարն է, որ գրողը ցանկանում է հասու լինել մարդու, բնութեան եւ արուեստի մասին եղած հնարաւոր ճշմարտութեանը՝ անցնելով ամէն ինչի միջով ու հասնելով իր հուժեղ խորքերը:

Ո՞րն է այս հնարաւոր ճշմարտութիւնը:

Այն փոփոխում է օրէցօր, անշուշտ, նաեւ տարեցտարի: Կարելի է այդ փոփոխութիւնը չափել տասնամեակից տասնամեակ, եւ պատճառն այն է, որ այդ նոյն գաղափարով համակուած գրողներ (նաեւ այլ մարդիկ) են եղել:

Ազատ դառնալը մեր ժամանակի պարտադրանքն է. ազատ ամենայն կեղծ ու անօգուտ բաներից, որքան էլ դրանք խոր արմատներ գցած լինեն մարդու հուժեղ մէջ: Սակայն ազատութեան այս յոյսն ու անհրաժեշտութիւնը ոչ մի դէպքում չեն նշանակում, թէ մարդը պէտք է կապարձակ դառնայ: Ճիշտ հակառակը, քանզի ազատութիւնը, իրական ազատութիւնը, ճշմարիտ ազատութիւնը կեանքն ու մարդու հուժեղն են աւելի ու աւելի է մոտեցնում կարգուկանոնին, զեղեցկութեանը, նրբանկատութեանն ու իմաստին, որոնք

պահպանելիս մանրամասների մէջ միշտ հարկ է ուղղումներ մտցնել. սրբագրել, զարգացնել, կատարելագործել, ընդարձակել ու ընդլայնել:

Խելամուտութիւնը մուտք է գործում մարդկային կեանքի հուժեղ մէջ: Այն պարտադիր թշնամական ընդունելութիւն է գտնում, թէպէտ, անշուշտ, ո՛չ ամենուր: Այդ անբարեացակամութիւնը փոքր-ինչ նուազեցնելու համար խելամուտութիւնը պէտք է ուղեկցուի հումորով, որից միշտ ծնունդ է ժամանակի լաւագոյնը: Առանց ժպտալու պարզապէս չի կարելի հայտնել մարդկային ցեղին: Գուցէ անհրաժեշտ է հայտնել, եւ հայտնաբերել սուեալ պահին գուցէ դիպուկ լինի, բայց եթէ միաժամանակ չես ժպտում, կոպիտ սխալ ես թույլ տալիս, որը վերացնում է հայտնաբեր օգտակարութիւնը, քանի որ առանց հումորի յոյս չկայ, իսկ մարդը չի կարող ապրել առանց յոյսի այնպէս, ինչպէս չի կարող ապրել առանց ոտքի տակի հողի: Կեանքն է իշխում աշխարհին. անանձնական եւ ազատ կեանքը: Ամէն օր անանուն ապրողները պատմում են իրենց պատմութիւնները կոչումով գրողների եւ դիլետանտների օգնութեամբ, բայց ամենամեծ պատմութիւն պատմողը ժամանակը, փոփոխութիւնը կամ մահն է: Սակայն մահը ո՛չ մեր կործանումն է, ո՛չ էլ՝ թշնամին: Մոնղեան կողքին մահը մեր լաւագոյն նուէրն է, իսկ ճշմարտութեան կողքին՝ լաւագոյն բարեկամը:

Ես վերադարձել եմ Սան Ֆրանցիսկո իմ առաջին գրքի հրատարակութեան քսանամեակի առթիւ. գրողական կեանքիս սկզբի առթիւ՝ որպէս իմ կենսաժամանակի գորութիւն, որպէս իմ անանուն «ես»-ի, ինչպէս եւ ցանկացած մէկի ու այլոց օգտին բուէարկող ներկայացուցիչ, նրանց օգտին, ում ձգտումները յար եւ նման են իմ ձգտումներին. ապրել ստեղծագործաբար, ապրել պատուաւոր, որքան հնարաւոր է՝ չվիրաւորել որեւէ մէկին, բաւականութիւն ստանալ մահկանացու լինելուց, չերկնչել ո՛չ մահից, ո՛չ անմահութիւնից, անխելքներին ու ձախողակներին նոյնիսկ աւելի փայլալայել, քան իմաստուններին ու սրբերին, քանի որ նրանք բազում են, հաւատալ, յուսալ, աշխատել եւ այդ ամէնն անել հումորով:

Ասել «այո», «ոչ» չաւել: Ի՞նչ խորհուրդ եմ տալիս հաւանական գրողին:

Ո՛չ մի խորհուրդ, քանի որ ամէն մարդ հաւանական գրող է, եւ այն գրողը, ով գրող է, ո՛չ խորհրդի կարիք ունի, ո՛չ էլ փնտում է:

Ի՞նչ կարծիք ունեմ քուէջներում եւ համալսարաններում ուսուցանող գրելու դասընթացների մասին:

Անօգուտ են, դրանք լիովին անօգուտ են:

Գրողը հոգեւոր անարխիստ է, ինչպէս եւ ամէն մարդ՝ իր հոգու խորքում: Նա դժգոհ է ամէնքից ու

ամէն ինչից: Գրողը բոլորի լաւագոյն բարեկամն է եւ միակ ճշմարիտ թշնամին՝ լաւ ու մեծ թշնամին: Գրողը ո՛չ քայլում է ամբոխի հետ, ո՛չ էլ՝ հրճուում: Այն գրողը, ով գրող է, խռովարար է ու երբեք չի դադարում այդպիսին լինել: Նա չի յարմարում այն պարզ պատճառով, քանի որ դեռ չկայ մի բան, որին արժէ հարմարուել: Երբ մի բան կայ, որին կիսով չափ արժէ յարմարուել, նա դրան էլ չի յարմարուի, կիսով չափ էլ չի յարմարուի: Նա նոյնիսկ չի հանգստանայ կամ քնի, ինչպէս միւս մարդիկ են հանգստանում կամ քնում: Երբ նա մեռնի, հաւանաբար մեռած կը լինի այնպէս, ինչպէս միւսները, բայց քանի դեռ ողջ է, ողջ է այնպէս, ինչպէս ուրիշ ոչ ոք, նոյնիսկ ո՛չ այնպէս, ինչպէս ուրիշ մի գրող: Այն գրողը, ով գրող է, նաեւ անխելք է: Նա այն մարդն է, ում այս աշխարհում ամենահեշտն է նուստացնել, ծաղրել, վանել ու արհամարհել. եւ դա հենց այն է, ինչ պէտք է լինի: Նա նաեւ խենթ է, չափաւոր խենթ, բայց աւելի ողջամիտ է, քան միւսները, օժտուած է լաւագոյն ողջամտութեամբ, միակ ողջամտութեամբ, որի համար արժէ անհանգստանալ. ազատ մարդու աշխոյժ, ստեղծագործական, խոցելի, հերոսական, չահաբեկող, ամբարտաւան ողջամտութիւնը:

Ես գրող եմ, ով գրող է, ինչպէս եղել եմ քսան տարի եւ ակնկալում եմ լինել քսանից աւելի տարիներ:

Ես եկել եմ այստեղ, որ մնամ, ինչպէս բոլոր միւս մարդիկ: Ոչ մէկը որեւէ պայթուցիկ նիւթ չի օգտագործի միւսի նկատմամբ: Սա իմանալով, հաւատալով սրան՝ այն գրողը, ով գրող է, չի ծրագրում իր առողջութեանը հոգ տանել հետեւողականօրէն, բայց ծրագրում է գրել իր գրելիքը աւելի ու աւելի նպատակադիր խելամուտութեամբ, հումորով ու սիրով:

Ես հպարտանում եմ իմ քսան տարիներով, որքան կարելի է՝ անգարդարուն: Ես հպարտ եմ, որ գրող եմ, այն գրողը, որ ե՛ս եմ, եւ ինձ համար կարեւոր չէ, թէ միւսները ինչով են հպարտանում:

- 1. Կրկնակի ենթատեքստով երգիծական բառախաղ է օգտագործուած. «Հողին յանձնէք այստեղ: Հողատարածք (նաեւ՝ վիճակահանութիւն) Ձեր փողի դիմաց», (բոլոր ծանօթ.՝ Թարգմանչի - Դ.Հ.):
- 2. "Abyssinian boy" - "Abyss" + "sin" + "Armenian" - «դժոխք» + «մեղք» + «հայ» բառերի վանկային համակցումից ստեղծուած նորակազմութիւն:

Անգլերէնից թարգմանեց՝ ԴԻԱՆԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆԸ  
. 2008 Դիանա Համբարձումեան, թարգմանութեան համար: Թարգմանուած է Saroyan, The New Saroyan Reader, 1984 գրքից: . Copyright 1984 by The William Saroyan Foundation

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ**  
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸԱՄԱՐ)  
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ  
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104  
ՍԱՆՐԱՍՏԱՆՈՒԹԻՒՆԵՐ  
ԸՆԴԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

**ԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՒՈՐՈՒՄ**  
**«ՀԱՅ ԿԻՆՈ ԵՒ ՄՇԱԿՈՅԹԸ»**  
**ՀԱՏՈՐԻՆ ՀԵՂԻՆԱԿ ԱԶԱՏՈՒՅԻ ԳԱԼԱՅՏԵԱՆ**

Մեր լեզուն  
 Մեր լեզուն, մեր խիղճն է դա,  
 Սուրբ հացը մեր սեղանի.  
 Մեր հոգու կանչն է արդար,  
 Ու մահը մեր բերանի:  
**Համօ Սահեան**

**ՄԱՔՐՈՒՀԻ ԹԱԹՈՒԼ ԵԱՆ**  
**ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ**

Բոլոր անոնք, որ բախտը պիտի ունենան ընթերցելու, ակահեմական մակարդակով լոյսին բերուած այս հատորը, պիտի դիմաւորուին Ազատուհին սիրուն դէմքով եւ խոհուն նայուածքով նկարին կողմէն, որ կարծես, կ'ըսէ կարդացողին:

-Սիրէ՛, հայ թէ օտար գրականու թիւնը:

-Սիրէ՛, գիրքը, կարգա՛, որ հաղորդակից դառնաս յիշուած վաւերական գրողներու հոգիին ու մտքին հարուստ գագացումներուն, թելադրութիւններուն, եւ զանոնք դարձուր կեանքիդ սկզբունքը, որպէսզի մոռնաս առօրեայէդ եկող մտահոգութիւններդ:

Կեանքին բերած դժուարութիւնները յաղթահարելու համար, մենք պէտք ունինք հոգեկան հարստութեան, որ ձեռք կը բերուի ընթերցումով միայն:

Սիրելի Ազատուհին, աշխատած է ընթերցողներուն տալ, ազգային ինքնութեամբ հպարտանալու կայծը ու անով ջերմացնելու իրենց հոգիները, բարիի ու գեղեցիկի ընկալումով: Ան՝ այսպէս կատարած կ'ըլլայ իր մտածող կնոջ առաքելութիւնը, որպէս հեղինակ իր տարիներու աշխատանքին, ու անկէ եկած գոհունակութեան վայելքով, փառք տալ Աստուծոյ կողմէ իրեն տրուած հոգիի ու մտքի հարստութեան, որ վեր է աշխարհի բոլոր գանձերէն:

Կարգալով սիրելի Պէպոյին կողմէ գրուած Ազատուհին դիմաստուերը, իր ըրած հարազատ գագացումներով արժեւորումը, իր կեանքի ընկերուհիին մտքին ու հոգիին հարստութեան, անոր որպէս ուսանող, որպէս մա՛յր եւ որպէս մեր անցեալին արժէքները ներկային կապող իր գրութիւններուն վաստակով հպարտացող ամուսին: Ընթերցողը լաւապէս հաղորդակից կը դառնայ իրենց

առաջին սիրոյ ամուր հիմով կազմուած ընտանիքին, ուսանելի կեանքին ստեղծած մթնոլորտին: Ուրեմն կը սորվինք գիրար գնահատելու արուեստը, որ լաւագոյն դեղն է կազդուրուելու եւ վերանորոգուելու համար:

Հետեւաբար, այս հատորը արգասիքն է, գիրար ամբողջացնող ամուրին հոգեկան եւ գրական ներդաշնակութեան: Անոնք կեանքը չեն ապրած իբրեւ պարտականութիւն, այլ գայն դարձուցած են գրական արժէքներու իւրացումով՝ իրենց երջանկութեան դաշտը:

Երկուքն ալ արժանացած են յարգելի բարձրագոյն աստիճանի շքանշաններու, որով կը մնան շնորհաւորելի բոլորիս կողմէ:

Բայց որպէս ծնողք, անոնց նուիրական շքանշանը կու գայ իրենց երկու գաւակներէն, Տիգրանին ու Ռազմիկին, եւ անոնց ազնիւ տիկիներուն կողմէ, ամէնօրեայ սիրոյ, յարգանքի ու երախտագիտութեան գագացումներով կազմուած դափնեպսակով, նուիրուած իրենց ծնողքին:

**«ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅՈՒՆԻ»**  
**ԽՄԲԱԳՐԱՊԵՏՈՒՀԻ**  
**ՍԻՐԱՆ ՍԵՋԱ**

Նկատելի է, Ազատուհին իր առաջին ելոյթը ունեցած է 1967 թուականին «Երիտասարդ Հայուհի» իմբազարպետուհի Տիկ. Սիրան Սեզայի գործունէութեան 40-ամեակին, եւ «Երիտասարդ Հայուհի» ի հրատարակութեան 15 ամեակին առիթով:

Ազատուհին 15 էջերու մէջ կը ներկայացնէ Տիկ. Սիրան Սեզայի կեանքին գլխաւոր գիծերը, որպէս արեւմտեան մշակոյթի ծանօթ իր բարձր դաստիարակութեամբ, սակայն հայ մշակոյթի սիրով բաբախուն եւ հայ արժէքներով խանդավառ գրագիտուհին, հրապարակախօսն ու հրապարակագիրը, որ կրնար ամբոխները առաջնորդել, դէպի Ս. էջմիածին հաւատարմութեան, դէպի հայրենասիրութիւն եւ դէպի հայ արժէքներու փոխանցումը նոր սերունդին, սփիւռքի կլանող իրականութեան մէջ:

Տիկ. Սեզան իր գրիչով ու խօսքով եղած է պաշտպանը կնոջ իրաւունքներուն, որպէս Պոլսահայ, շարունակած է Սրբուհի Տիւ-

սաբի, Սիպիլի, Զապէլ Եսայեանի համոզումները:

«Երիտասարդ Հայուհի»ն, սիրուած եւ փնտուած էր իր ժամանակին: Ան ունէր մտաւորական աշխատակիցներ, նաեւ, բոլոր առիթներով իր առաջնորդող եւ խայթող իմբազարականներով դաստիարակիչ էր: Ան թերթին մէջ իր նպատակը կը բացատրէ այս սողերով:

Այս թերթին էջերէն հայ կինը պիտի կարենայ վերագտնել ոգեղէն լինելիութեան այն բոլոր տուեալները, որ իրն են եղած անցեալին մէջ: Այս էջերէն հայ կինը նոր արժէքաւորումի եւ հետեւաբար նոր գնահատումի պիտի տանի իր դերն ու դիրքը հայ պատմութեան եւ հայ անունին հետ դէմ առ դէմ:

Տիկ. Սեզան նաեւ ունի «Պատուէջ» եւ «Մեղաւորուհի» գրական երկերը:

Յարգանք իր հունձքին ու վաստակին խօսքերով, Ազատուհին կու տայ ամբողջական էութիւնը Տիկ. Սիրան Սեզային, որ միայն հայութեամբ կը շնչէր:

**ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆԻ**  
**«ԱԻԵՐԱԿՆԵՐՈՒ ՄԷՋ»**  
**ՀԱՏՈՐԸ**

Ազատուհին «Աւերակներու մէջ» հատորին տիրական ոգին վեր կ'առնէ, որ կը յատկանշուի ցեղին ապրելու կամքով, յարութեան եւ վերընձիւղումի շունչով, անմեռ ոգիով, ապագայի նկատմամբ վառ յոյսերով ու անխախտ հաւատքով խորունկ թելադրութիւններով:

Գրագիտուհին իր հոգեկան արիւթեամբ գրած է այս պատմութիւնը, հետագայ սերունդներու համար, վաւերագրական այս գործը որպէս վկայութիւն:

Եսայեան կը բացայայտէ թուրքին ծրագրուած բարբարոսութիւնները, եւ կը գնահատէ Հաճընի, Տէօթեօլի, Ղարաբաղի, Սիսի եւ այլ շրջաններու ինքնապաշտպանութեամբ մաքառող հերոսութիւնները:

Եսայեան հայ կնոջ քաջարի ու խրոխտ կերպարը կ'ուրուագծէ իր սեռին բովանդակ էութեամբ, գորութեամբ եւ համայնովը: Կարգալով այս գիրքը, ընթերցողին հոգին կը լեցուի ազգային հպարտութեամբ:

Ան կը գրէ. «Իմ կոխտուած ու արիւնոտած ցեղին ձայնը կ'երգէր երակներու մէջ գոռ եղանակներով: Թշնամիին դիտաւորութիւնները անգամ մըն ալ ապարդիւն

եղեր էին ու կը գգայի հակառակ մեր ականատեսի յուսահատորէն տխուր տպաւորութիւններուն, թէ անմահ եւ անքակտելի բան մը, ցեղին հանձարը խուսափած էր ոճրագործին կապարներէն, հրացաններէն եւ անոնց վառած խարոյկներէն»:

-Ու ասիկա ցեղին վրէժն էր... Յաւալի է, որ Զապէլ Եսայեան գոհը եղաւ 1937ի Սթալինեան վայրագութեան Զարենցի եւ ուրիշներու նման:

**ՍԻՊԻԼԻ ՀԱՅԵԱՑՔՆԵՐԸ**  
**ԿԵԱՆՔԻՆ ՈՒ ԳՐԱԿԱՆ**  
**ԳՈՐԾԵՐՈՒՆ ԸՆԴՄԷՋԷՆ**

Սիրելի Ազատուհին, մեծ համբերութեամբ եւ շնորհակալ աշխատանքով, վաւերական աղբիւրները ամբողջ ուսումնասիրելով, ընթերցողին կը ծանօթացնէ Զապէլ Ասատուրի (Սիպիլ) կեանքը ու գրական գործերը: Ընթերցելով հատորին 107-120 էջերը մենք լաւապէս կը ծանչնանք Սիպիլը եւ գայն մեր խօսակիցը դարձնելով իր արդիական կազմակերպչական, գրական եւ դպրոցասիրական գործունէութեան կը սորվինք մեր կեանքը դարձնել ծառայութիւն, մեր ժողովուրդին ու նոր սերունդի դաստիարակութեան:

Զապէլ եւ Հրանդ Ասատուրի պատրաստած թանգարանները որպէս դասագիրք եղած են իմ սերունդիս մայրենի լեզուին գիրքերը իրենց լման շարքով: Անոնք պատրաստուած էին, իմաստութեամբ, աշակերտը դաստիարակելու նպատակով, խիղճով եւ հարուստ բովանդակութեամբ, նիւթերու ընտրութեամբ, բառագիտութեամբ լի իրաւ թանգարանի մակարդակ ունէին:

Սիպիլ եղած է հայոց լեզուի եւ գրականութեան ուսուցչուհի եւ իր աշակերտները պատրաստած է, որ երթան գաւառներու մէջ ուսուցանեն լեզու ու պատմութիւն:

Սիպիլի հանրային գործունէութեան յատկանշական էջը կը հանդիսանայ «Ազգասէր Հայուհեաց» ընկերութիւնը Պոլսոյ մէջ 1879ին երբ տակաւին 16 տարեկան էր:

«Ազգասէր Հայուհեաց» միութիւնը շրջաններու մէջ տասնեակներով մասնաճիւղեր եւ դպրոցներ բանալով, հայ կիներու համախմբումներ կատարելով, կը սատարէր անոնց զարգացումին մինչեւ 1894:

Շաք-ը էջ 19

**INNOVATIVE**  
**Designs Manufacturing, Inc.**  
 idmifurnishings.com

### ԳԵՂԵՑԻԿ ԱՊՐԱԾ, ԳԵՂԵՑԻԿ ՄԵՌԱԾ, ԳԵՂԵՑԻԿ ԱՐԱՆ...

#### ԱՆԻ ԹՈՐԱՆԵԱՆ

Այսպիսին է Արամ Աշխարհա- կալի որդի Արա Գեղեցիկը:

Արքայի կեանքն ու անցած պատմական ճամբան՝ ընդհուպ մինչեւ իր մահը, որ մէկ պարզ նախա- դասութեամբ բնութագրած է հայ մեծ բանաստեղծ Պարոյր Սեւակը: Երբ կը խօսինք Արա Գեղեցիկի մասին, որպէս ուղեցոյց, պէտք է սեւակեան այս դիպուկ ձեւակեր- պումին ապաւինիլ:

Իրականութեան մէջ եղածը ոչ թէ ձեւակերպում, այլ բանաստեղ- ծական հանճարի ուժով կատար- ուած հաստատումն է ա՛յն անհերքե- լի ճշմարտութեան, որ քանքարաւոր հնագէտ Հենրիխ Շլիմանը բարձրա- ձայնած է 19-րդ դարակէսին. "Եւրո- պայի ամբողջ դժբախտութիւնը այն էր, որ ան որպէս քաղաքակրթու- թեան հիմք ոչ թէ Հայաստանը, այլ Յունաստանը ընդունեց..."

Ալ աւելի բանաք փակագի- ծերը եւ անգամ մը եւս անդրա- դառնանք Հոմերոսեան հանճարի շնորհիւ մեզի հասած բազմաշահ թրոյակի՝ Իլիոնի կործանման պատ- մութեան: Անշուշտ, պատմութենէն ծանօթ ենք, թէ ինչպէս յոյները խորամանկութեամբ (իմա՝ խաբէ- ութեամբ) ի նշան պատերազմի աւարտի եւ ակնկալուող խաղաղու- թեան՝ թրոյացիներուն նուէր ձգե- ցին փայտէ հսկայական ձիւ:

Մինչ դաւին անտեղեակ թրո- յացիները ուրախութեամբ եւ ճոխ գինարբուքով եղբայրասպան պա- տերազմի աւարտը կը նշին, թրո- յական ձիու անտակ որովայնէն դուրս թափեցան յոյն ծպտեալ գինուորները, բացին քաղաքին դարպասները... եւ ծայր առաւ աննկարագրելի սպանդը, որու ըն- թացքին յոյները թրոյացիներէն եւ ոչ մէկը խնայեցին՝ ոչ ծերերն ու կիները, ոչ մանուկները, ոչ ալ առաւել եւս յոյներու "ազնուութեան" հաւատացած ու գինարբուքով տար- ուած թրոյական բանակի մինչ այդ անպարտելի գինուորները:

Կարծես թէ Արա Գեղեցիկի պատմութեան հետ զուգահեռներ չտարած ալ յստակ է, թէ Շլիմանը ինչո՞ւ դժբախտութիւն կ'որակէ եւրոպական ընտրութիւնը:

Թրոյական ձիւն... նենգ խորա- մանկութեան, խաբէութեան ա՛յն ձիւն, որ այսօր փառահեղորէն բազ- մած է շատ ու շատ պետութիւններու քաղաքակրթութեան եւ քաղա- քականութեան հիմքին մէջ ու խորհրդանիշ, դրօշ ու դաւանանք դարձած է...

Հոմերոսեան հանճարի ուժով նկարագրուած այս պատմութեան մշակութային աննկարագրելի գե- ղեցկութիւնը մեզի թոյլ չէ տուած, այլ՝ քաղաքական բարոյականու- թեան տեսանկիւնէն դիտարկել այս պատմութիւնը, որու մասին մեզմէ գրեթէ հարիւր յիսուն տարի առաջ ահագանգած է հնագէտ Շլիմանը...

Արա Գեղեցիկին պատմու- թիւնը, անշուշտ, բնաւ չի գիշիր իր մշակութային գեղեցկութեամբ ու մագնիսականութեամբ, բայց, ինչպէս բազմիցս ապացուցած է մարդկութեան պատմութիւնը՝ չար ու չիմար օրինակները շատ աւելի վարակիչ են, քան բարի ու խելացի պատմութիւնները...

Գանք, սակայն, գեղեցիկ ապ- րած, գեղեցիկ մեռած Արա Գեղե- ցիկին:

Արամի մահէն վերջ Հայաս-

տանի խնամակալութիւնը կ'անցնի իր գաւկին՝ Արա Գեղեցիկին: Այդ շրջանին Ասորեստանի մէջ Նինոսը կը թագաւորէր, որ արքայական շնորհ- ներու կ'արժանացնէր Արան: Նինո- սին կինը՝ վաւաշոտ ու այրասէր Շամիրամը, բազում տարիներ լած ըլլալով Արայի անզուգական գեղեց- կութեան մասին, անհուն տարփան- քով կը տենչար գայն տեանել, բայց ահա թագաւոր ամուսինէն, չէր արտօ- ներ իրականացնել այդ ցանկութիւնը:

Երբ Նինոսը կը վախճանի, Շամիրամը պահը յարմար նկատելով համարձակօրէն կը բացալայտէ իր տարփանքը եւ իր պատգամաւորնե- րը կ'առաքէ Արա Գեղեցիկին մօտ:

Շամիրամը ճոխ ընծաներով, բազում աղերսանքներով ու պար- գեւներու խոստումով Արային կը խնդրէ գալ Նինուէ եւ կամ "ամուս- նանալ իր հետ եւ թագաւոր ըլլալ բոլորին, կամ ալ իր տարփալից ցանկութիւնը կատարել ու մեծա- մեծ նուէրներով ու խաղաղութեամբ իր երկիրը վերադառնալ": Շամի- րամի պատգամաւորները կու գան Հայաստան, բայց Արան կտրակա- նապէս կը մերժէ կատարել Շամի- րամին կամքը:

Երբ բազում բանագնացութիւն- ները ապարդիւն կ'անցնին, Շամի- րամը սաստիկ զայրացած կը դադ- րեցնէ պատգամագնացութիւնը, զօրք կը հաւաքէ եւ շտապ կը մեկնի Հայոց Աշխարհ՝ Արայի դէմ պատերազմե- լու: Սակայն անոր նպատակը Արան ո՛չ թէ սպաննել կամ հալածել էր, այլ գայն նուաճել ու իր մոլեգին ցան- կութիւնը, իր երկարամեայ երա- գանքը իրականացնել էր:

Շամիրամը փութով կը հասնի Հայաստան: Ծակատամարտին առաջ ան իր զօրապետներուն կը հրահան- գէ ամէն կերպ կենդանի պահել Արան: Սակայն Արան պատերազմի դաշտին մէջ, մարտի ընթացքին կ'իջնայ...

Յաղթանակէն վերջ Շամիրա- մը մարտադաշտ կը դրկէ իր դիա- հաւաքները, որպէսզի դիակներու մէջ փնտռեն իր բաղձալի Արան: Արա Գեղեցիկը կը գտնեն խումբ մը քաջամարտիկներու մէջ... սպաննուած:

Երբ գրգռուած Հայոց զօրքը իր ուժերը կը վերադասաւորէր եւ Արա Արքային մահուան վրէժը լուծելու համար կը պատրաստուէր դարձեալ մարտնչիլ, Շամիրամը անոնց դիմելով կ'ըսէ. "Ես աստ- ուածներուս հրամայեցի լիզել անոր վէրքերը, եւ ան կը կենդանանայ":

Շամիրամը յոյս ունէր իր հմայական դիւթութեամբ վերա- կենդանացնել Արան: Երբ փորձերը ապարդիւն կ'անցնին՝ ան գաղտնօ- րէն կը թաղէ Արան, յետոյ իր հոմանիներէն մէկը Արայի կերպա- րանքով կը պաճուճապատէ եւ լուր կը տարածէ, թէ՝ "Յարալէզները լիզելով վերակենդանացուցին Արան եւ կատարեցին մեր փափաքն ու ցանկութիւնը":

Շամիրամը Արային "յարու- թիւն տուած" աստուածներու պատ- ւոյն արձան կը բարձրացնէ եւ մեծամեծ զոհեր կը մատուցէ: Արա- յի յարութեան լուրը կը տարածուի Հայոց Աշխարհին մէջ, Շամիրամը կը խաղաղեցնէ ժողովուրդին յուզ- մունքը եւ գաղտնի կը հեռանայ Հայաստանէն...

Ահա, այսպիսի բաներ... Իսկ մենք դեռ կը շարունակենք մաք- սային միութիւն ու եւրոպական կողմնորոշում խաղալ...

### ԱՐԱՄ ԱՇԽԱՐՅԱԿԱԼ

Գէպի հազարամեակներու խորքերը տանող մեր պատմու- թեան մէջ եւ ո՛չ մէկ գահակալի կամ առաջնորդի մասին տեղեկու- թիւնները այնքան հակասական են, որքան Արամ Աշխարհակալի մա- սին եղածները: Նշենք, որ փաստը տարօրինակ չի թուիր բնաւ, այդ- պիսին է աշխարհակալներու ճա- կատագիրը՝ միշտ շղարշուած խորհրդաւորութեան թանձր վա- րագոյրով:

Անոնց անուններուն շուրջ կը միաւորուին ու կը սերտաճին դիւ- ցազներգութիւններն ու գեղեցիկ աւանդապատումները, երբեմն շո- դոքորթ, երբեմն բացալայտ թշնա- մութեամբ գրուած պատմաբանա- սիրական "լուրջ ու հաւաստի" ու- սումնասիրութիւնները եւ յաճախ դժուար կը դառնայ սահմանագա- տել իրականը աւանդապատումէն, սուտն ու կեղծիքը՝ պատմական ճշմարտութենէն:

Այս առումով Արամ Աշխար- հակալի կեանքն ու գործունէու- թիւնը ոչ միայն բացառութիւն չեն, այլ ըստածին լաւագոյն ապա- ցոյցն են, եւ որպէսզի այս շարադ- րանքի ընթացքին գերծ մնանք ծայրայեղութիւններէ՝ մենք պիտի անդրադառնանք թէ՛ հայ, թէ՛ օտար աղբիւրներուն...

Միայն պատուանունները, որոնցմով գինք օծած են օտարնե- րը, բաւարար են, որպէսզի ընթեր- ցողը պատկերացում կազմէ Արատ- տայի (Հայաստանի հնագոյն ան- ուանումը) Հարմա Արքայի որդի Արամի (ըստ ասորական աղբիւր- ներու՝ Արամէ) հզօրութեան, քա- ղաքական կամքի եւ պետութիւնը կառավարելու անոր բացառիկ ըն- դունակութիւններուն մասին:

Եւ այսպէս՝ Արամ Արի, Արամ Միւսորիչ, Արամ Հայկեան, Կեն- դանի Աստուած, Արամ Աշխարհա- կալ...

Արամը սերած էր Աստուած- ներու աղիւնէն: Մեծագործ էր, զոր շատ մը հպատակ ազգ ու ցեղեր որպէս կենդանի Աստուած կը պաշ- տէին:

Զինք կ'ընդունէին որպէս ռազ- մի, կրակի, ուժի եւ բեղունութեան Աստուած եւ տարբեր լեզուներով կը կոչէին՝ «էա Ատոնիս», Թա- մազ... Աստուած:

Չափազանց բարդ էին անոր աւելի քան կէս դար տեւած գահա- կալութեան (Ք.ա. 1827-1769) առա- ջին տարիները: Նախ, ինչպէս ընդունուած էր Հին Աշխարհի մէջ, ինքնահաստատման խնդիրը կար, որը առաւել եւս բարդացած էր, քանի որ Հայաստանի անօրինակ հզօրացումը միաւորած էր սահմա- նակից գրեթէ բոլոր մեծ ու փոքր պետութիւնները:

Ահա այդ ճակատագրական պա- հուն էր, որ ասպարէզ իջաւ Գեղա- մի թոռն ու Հարմա Արքայի որ- դին, որուն իշխանութեան փառա- հեղ տարիները առ այսօր պատմա- գիտութիւնը չափազանց աղքատիկ կը լուսաբանէ: Ասիկա օտար աղ- բիւրներու պարագային, անշուշտ, հասկանալի է, բայց մեր աղբիւր- ներու պարագային...

Պատմահայր Խորենացին, Ղե- ւոնդ Ալիշանը, Միքայէլ Չամչեա- նը, առաւել՝ մէկ-երկու օտար աղ- բիւրներ, պատմութեան այդ շրջա- նը ուսումնասիրողներու շարքին մէջ մինչեւ հիմա ալ կը մնան իրենց հպարտ միայնութեան մէջ...

Արամը կարծ ժամանակի ըն- թացքին կը յաջողի կազմակերպել երկրին պաշտպանութիւնը եւ իր

հմուտ ռազմավարութեան շնորհիւ Հայաստան պետութեան տարածքը աներեւակայելի չափերու կը հասց- նէ:

Ան նախ ծունկի կը բերէ Մարաստանը եւ բարբարոս աւա- գակապետի համարում ունեցող ու տարածաշրջանին ահ ու սարսափը հանդիսացող Նոքար Մարեւոր գե- րելով կը բերէ մայրաքաղաք Ար- մաւիր եւ ի ցոյց հոն գտնուող օտար երկիրներու դեսպաններուն, գայն կը գամէ քաղաքի դարպասներուն: Կարգը Ասորեստանինն էր, որուն թագաւորը Սարմանասարն էր, իսկ զօրքերուն հրամանատարը՝ ան- պարտելի համարուող Բարշամը:

Շարունակելով իր անկասելի յաղթարշաւը, Արամ Արքան կը հպատակեցնէ հիւսիսային ցեղեր՝ քիմերները, սքիւթները, հոները, կը յաղթէ փոռկիացիներուն, կը նուաճէ ամբողջ արեւելքը, ափրիկ- եան Լիպիան...

Արեւմուտքի ամէնէն հզօր քա- ռասուն ցեղերը նուաճած Գաղիան եւ եգիպտացիները իրենց հաւա- տարմութիւնը կը յայտնեն Արա- մին եւ ան կը հռչակուի Արամ Աշխարհակալ:

Հոս անհրաժեշտ եւ կարեւոր կը համարենք նշել առանձնաչատ- կութիւն մը, որով Արամ Աշխար- հակալը չափազանց շահեկանօրէն կը տարբերէր Հին Աշխարհի բոլոր արքաներէն ու զօրապետերէն: Ան բնաւ չստրկացուց հպատակ ժողո- վուրդները եւ անոր պետական կառավարման օրէնքները միշտ մար- դասիրական եղան: Այդ էր պատ- ճառը, որ իր հզօր եւ անծայրածիր թագաւորութիւնը ստեղծելու ըն- թացքին ան հազուադէպ կը հան- դիպէր կատաղի կամ յամառ դի- մադրութեան:

Միակ բանը, որ պարտադիր էր օտար դեսպանորդներուն հա- մար՝ հայերէնի իմացութիւնն էր, որովհետեւ Արամ Աշխարհակալը նոյնիսկ պետական կարեւորագոյն հարցերով օտար դեսպանորդները չէր ընդունէր, մինչեւ անոնք հա- յերէն չստղվէին...

Բազմաթիւ են այն քաղաքնե- րը, որոնց ստեղծումը անմիջակա- նօրէն կապուած է Արամ Արքայի անուան հետ:

Հիւսիսային ցեղերուն դէմ տա- րած յաղթանակէն ետք, ան Հիւսի- սային կովկասի՝ Հայաստանի ծայ- րամասը (այժմ՝ Ռուսիոյ Դաշնու- թեան տարածք) Արամայէն բերդ- ամրոց քաղաքը կառուցել տուաւ, որ այսօր Արմաւիր կը կոչուի: Հայկազն քաղաք-ամրոցը կը կա- ռուցէ, որը հետագային այդ ժողո- վուրդները իրենց անունով Հայկոփ կոչեցին, որը յետոյ դարձաւ Մայ- քոփ եւ այսօր Հարաւային Ռուսիոյ կարեւորագոյն քաղաքներէն է: Սեւ ծովու ափին (Պոնտական ծով) նաւահանգիստ ամրոց կառուցել կու տայ՝ Փոիթը, որ այսօրուան Փոթի քաղաքն է: Արամ Արքան այդ քաղաքը մայրաքաղաք Արմա- վիրի «Սօսեաց անտառի»՝ Պայա- գատներու դպրոցի իր ընկերոջ՝ Փոիթ իշխանին անունով կոչած էր:

Այդ ամէնը, սակայն, յետոյ պիտի գար, եւ արդէն Աշխարհա- կալ պատուանունին արժանացած Արամը միշտ երախտագէտ երկիւ- դածութեամբ պիտի լիշէր իր ու- սուցիչներուն անունները: Ան ամե- նաշատը ռազմագիտութեան ու- սուցիչ՝ Մարտիկ իշխանը կը լի- շէր, որ պալատական շուայտ ու

### ՀՈԳԵԲԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԻՆՔՆԱՏԻՐԱՊԵՏՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Ճնշուածութիւնը (stress) ոչ միայն ջղաջին լարուածութիւն է, այլեւ արձագանգ մարմնի համար ոչ սովորական վիճակի դէմ: Զայրոյթը, վախը, ստեղծ, ուրախութիւնը, սէրը, ուժեղ վախը տաքութեան կամ ցուրտի, վարակներու կամ դեղերու ընդունման հանդէպ, կը յանգեցնեն ճնշուածութեան, որուն մեր մարմինը դեռ պէտք է յարմարի:

Մեր առաջին արձագանգը անհանգստութիւնն է: Եթէ վտանգը չանհետանայ, վրայ կը հասնի հակադրուելը, դիմադրելը. մարմինը ամբողջ ուժերը կը տրամադրէ պայքարելու ազդակներուն դէմ, որոնք յառաջացած են ճնշուածութեանէն: Երրորդ շրջանը քայքայման շրջանն է, երբ պահպանուած ուժերը կը վերջանան, եւ մարմինը կը հիւանդանայ: Այդպիսի դրութեան մէջ չյայտնուելու համար շատ կարեւոր է կարենալ տիրապետել յոյզերուն:

Բայց եւ այնպէս, պատահական չէ, որ շատ յաճախ կաթուածի զոհ կը դառնան հանգիստ թուացող մարդիկ: Արտաքինապէս զգացումներուն կարենալ տիրապետելը չի բացառեր մարմնի վրայ անոնց բացասական ազդեցութիւնը: Մեզմէ կը պահանջուի ուրիշ բան՝ բացասական զգացումներու

զրգուածութեան օճախը ուղեղին մէջ վերածել դրականի:

Հանգստացնող դեղամիջոցները թոյլատրելի են միայն ծայրայեղ պարագային, ան ալ բժիշկի հսկողութեամբ ու նշանակումով: Այլ բան է երաժշտութիւնը, բնութեան հետ շփումը, ֆիզիքական աշխատանքը եւ այլն: Լաւ է, եթէ հերթականութեամբ կրնանք միացնել արտաքին դրական զգացումները (օրինակ՝ իրար ետեւէ հանգստացնել միկանները կամ հաշուել սրտի բաբախումները):

Փորձեցէք նաեւ համոզել դուք ձեզ, որ ճնշուածութեան իրավիճակի պատճառը թաքնուած է ձեր մէջ, կեանքի հանդէպ ձեր միտքերուն եւ հայեացքներուն մէջ:

Այդ տանջալի իրավիճակէն կարելի է ազատիլ, օրինակ, աստիճաններով արագ բարձրանալ-իջնելով, բարձր ձայնով պոռալով այն ամէնի մասին, ինչ որ դուք կը մտածէք, ձեզի նեղացնողին բոլոր գոյներով նամակ գրելով, իսկ յետոյ պատուելով:

Մի՛ ծուլանաք ու մի՛ ամչնաք այդպէս ընելէ, քանի որ ատիկա շատ կարեւոր է ձեր առողջութեան ու ներուժի բարձրացման համար: Եւ, այդուհանդերձ, այդ մէկը մարդը կը դարձնէ իր վարուելակերպին մէջ աւելի բնական ու անբուսաբան:

### ԱՍՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ ՔԱՅՔԱՅՈՂ ԳԼԽԱՒՈՐ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Գիտնականները պարզած են, թէ ինչ հանգամանքներէ կախուած է ամուսնութեան տեւողութիւնը:

Պարզուած է, որ հիմնական պատճառներն են ծխախոտը, փոքրիկի առկայութիւնը կամ բացակայութիւնը, տարիքը, ինչպէս նաեւ ամուսիններու նիւթական վիճակը: 2500 զոյգի հետ իրականացած հետազոտութիւնը ցոյց տուած է, որ եթէ ամուսիններէն մէկը կը ծխէ, միւսը՝ ոչ, մէկը տարիքով մեծ է միւսէն, կամ ալ անոնցմէ մէկը նախապէս ամուսնացած էր, ուստի հնարաւոր է, որ այդ զոյգը շուտ բաժնուի:

Զոյգերու 20 տոկոսը, որոնք զաւակ ունեցած են մինչեւ ամուս-

նանալը, կամ կանայք աւելի շատ ուզած են զաւակ ունենալ, քան՝ տղամարդիկ, այս պարագային եւս ամուսնալուծութիւնը կը դառնայ շատ հաւանական:

Ամուսնալուծութեան հաւանականութիւնը կը կրկնապատկուի, եթէ տղամարդը կնոջմէ մեծ է ինը եւ աւելի տարիով կամ, եթէ տղամարդը ամուսնացած է մինչեւ 25 տարեկան դառնալը:

Եւս մէկ կարեւոր փաստ կայ, որ զոյգի նիւթական վիճակն է:

Զոյգերու 16 տոկոսը, որոնք ունին նիւթական խնդիրներ ու դժուարութիւններ, կը բաժնուին: Այդպէս կը պատահի նաեւ, երբ տղամարդը երկար ժամանակ չի կրնար աշխատանք գտնել:

### ԻՆՉ Է ԵՈՎԱՆ

Եոկան գիտելիքներու համակարգ մըն է, որ կը նպաստէ մարդու ֆիզիքական, մտաւոր եւ հոգեւոր զարգացման: Անիկա ինքնաճանաչման արուեստ է, որ կը սկսի մարմնի ֆիզիքական կատարելագործումէն եւ կ'աւարտի հոգիի կատարելութեամբ ու մարդու մաքրութեամբ, բնութեան եւ տիեզերքի հետ ներգաշնակութեամբ:

Տարածուած կարծիք կայ, որ եոկայի հայրենիքը Հնդկաստանն է, սակայն աշխարհի տարբեր շրջաններու մէջ յայտնաբերուած են եոկայի հետ առնչուող ժայռապատկերներ, որոնք ունին հինգէն տարւոյ հազար տարուան վաղեմութիւն:

Ասիկա կը վկայէ, որ եոկան ստեղծուած է ոչ միայն Հնդկաստանի մէջ ու ոչ միայն հնդիկ ժողովուրդի, այլեւ՝ ամբողջ մարդկութեան համար. անիկա համամարդկային արժէք է եւ կը ծառայէ մէկ նպատակի՝ մարդկութեան ուղղութիւն տալու՝ լիարժէք կեանքով ապրելու համար:

Հագարամեակներ շարունակ եոկայի գիտելիքները սերունդէ-սերունդ փոխանցուած են միայն ուսուցիչէն աշակերտին: Այդ ընթացքին ձեւաւորուած են եոկայի տարբեր ուղղութիւններ՝ հաթհա եոկա, զարմա եոկա, ճանա կամ

Չնեանա եոկա, Ռաջա եոկա, պհազդի եոկա, մանթրա եոկա եւ այլն:

Ըստ մեզի հասած տեղեկութիւններու՝ ՔԱ 2-րդ դարուն եոկայի մասին գիտելիքները առաջին անգամ համակարգուած եւ դասակարգուած կերպով ներկայացուցած ու իբրեւ դասագիրք գրի առած է Բադանճալի իմաստունը: Այդ դասագիրքը կը վայելէ մեծ հեղինակութիւն ամբողջ աշխարհի մէջ, իբրեւ դասական եոկայի առաջնային դասագիրք:

Բադանճալին իր «Եոկա-սուղրա» գիրքին մէջ կը նշէ եոկա բառի ստուգաբանական եւ իմաստային երկու բացատրութիւն: Մէկ պարագային եոկա բառը կը կապուի եոկի արմատի հետ, որ թարգմանաբար կը նշանակէ կապ կամ միութիւն, այսինքն՝ կապ կամ միութիւն մարդու, բնութեան եւ տիեզերքի միջեւ: Միւս պարագային՝ եոկա բառի ծագումը կը կապուի հին սանսկրիտի եոլա արմատի հետ, որ կը նշանակէ մտախոկում:

Բադանճալի իմաստունը կը նշէ, որ եոկան մտաւոր թրթիւններու, շարժումներու, թափառումներու կայունացումն է: Ան եոկան կ'անուանէ աշդանկա եոկա, որ բառացիօրէն կը թարգմանուի եոկա:

### ՄԵՐ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆԸ ԸՆԿՈՅՁԻ ԱՄԵՆՕՐԵԱՅ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ Կ'ԵՐԿԱՐԷ ԿԵԱՆՔԸ

Գիտնականները պարզած են, որ ընկոյզի ամէնօրեայ օգտագործումը կ'երկարէ մարդու կեանքը: Անոնք կը հաւաստիացնեն, որ ընկոյզի որոշ քանակի օգտագործումը (ամէնօրեայ) մտաւորապէս 19%-ով կը նուազեցնէ տարբեր հիւանդութիւններու հետ կապուած մահացութեան վտանգը:

Ասիկա հաստատուած է անդականոնի, առողջ ապրելակերպի գործօններու, տարբեր սեռի եւ տարիքի մարդոց առողջական խնդիրներուն առնչուող շարք մը ուսումնասիրութիւններու հիման վրայ:

Հետազոտութեան ընթացքին պարզուած է, որ ընկոյզի հանդէպ կախուածութիւնը կը համարուի

օգտակար սովորութիւն:

Փորձագէտները հաստատած են, որ ամէն օր ընկոյզ օգտագործող մարդիկ ունին աւելի սլացիկ կազմուածք, շատ ժամանակ կը տրամադրեն մարմնամարզանքին, քիչ կը ծխեն, կ'օգտագործեն բաւական շատ միդը եւ բանջարեղէն:

Գիտնականները օգտակար կը համարեն օրական 30 կրամ ընկոյզի օգտագործումը:

Նախապէս գիտնականները պարզած էին, որ «ենթաստամոքսային գեղձի քաղցկեղով» ամենաքիչ կը հիւանդանան այն կիները, որոնք պարբերաբար կ'օգտագործեն ընկոյզ, նուշ, պիստակ, հնդկընկոյզ:

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
 Enclosed a check for (one year)  
 \* \$50,00 \* \$100,00 (first class) for USA  
 \$ 100,00 (Air Mail) for Canada.  
 \$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----  
 Address: -----  
 City: ----- State:----- Zip Code:-----  
 Country: -----  
 Tel:----- Fax:-----

**ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ**

**PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳԼԱՅՈՂ ԳԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ**

Փալմ Սփրինգսի գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասեւեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, քարուզի, թեմիսի խաղաղաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Վարձման գներն են՝

Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450

**Մանրամասների համար հեռաձայնել՝ (818) 246-0125**

### ԵՐՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԽՍՏԱՅՈՒՅԱԾ Է

Շարունակում է 1-էն

դարձանականներ կարծում են, որ Հայաստանի արտաքին քաղաքական վերջին որոշումների վերաբերեալ իրենց դժգոհություններն արտայայտման լավագույն միջոցը կարող է լինել Լեոնային Ղարաբաղի հակամարտության կարգադրման վերաբերեալ առաել կոչ, իրականում հակամարտության խաղաղ հանգուցալուծմանը որևէ կերպ չնպաստող, եթէ ոչ ուղղակիորեն վնասող մտեցումների կիրառումը»,- «Ֆէյսպուքի» իր էջին վրայ գրած է Ֆարմանեան:

Հայկական պատուիրակության մէկ այ անդամ՝ ընդդիմադիր պատգամաւոր Նիկոլ Փաշինեան, իր կարգին յայտարարեց, որ Հայաստան-Եւրոպական Միութիւն յարաբերութիւններուն մէջ Սեպտեմբեր 3-էն յետոյ Հաստատուած է գաղջ միջոցառում, որու պատճառաւ Պրիւքսին ու Երեւանը տապալեցին

միասնական փաստաթուղթի ընդունումը:

«Հայկական կողմը չի ցանկացել ընդունել յայտարարութիւն, որպէսզի Ռուսաստանում բացատրութիւններ տալու անհրաժեշտութիւն չլինի»,- ըսաւ Նիկոլ Փաշինեան՝ յայտարարելով, որ այս գործընթացը ղեկավարուած է Երեւանէն: «Մենք Ստրասբուրգում ենք եղել, բայց եկել, պարզել ենք, որ Յովիկ Աբրահամեանն ու Էդուարդ Նալբանդեանն էին բանակցում», ըսաւ Նիկոլ Փաշինեան:

Վերջին տարիներու Եւրամիութիւնը միատեղ յայտարարութիւն՝ Ատրպէյճանի հետ չէ ստորագրած, քանի որ Պաքուն չէ համաձայնած Ղարաբաղի հարցով Եւրոպայի Միութեան հաւասարակշռուած դիրքորոշման հետ: Մինչդեռ Հայաստան, նախորդ տարիներուն ունենալով միատեղ յայտարարութիւններ, այս անգամ գրկուելով կը հաւասարի Ատրպէյճան հետ:

### ԻՆՉՈ՞Ւ Է ԸՆԴԴԻՍՈՒԹԻՒՆԸ

Շարունակում է 2-էն

նոյնն է՝ բախուելու են քաղաքական մեծամասնութեան՝ ուղղակի արդէն լիտիութեան հասնող ինքնասիրահարուածութեան, ինքնագոհութեան եւ պարզապէս սեփական ճշմարտութեան մէջ գերհամոզուածութեան անյաղթահարելի պատին, ինչից եւ ծնւում է պոպուլիզմին տուրք տալու հակումը: Այլ կերպ ասած՝ ստեղծուել է մի իրավիճակ, երբ կողմերից իւրաքանչիւրը գործում է իրեն վերապահուած որոշակի դերի շրջանակում, որոնք միասին ստեղծում են մի բեմադրութիւն, որի ողջ իմաստը «թամաշա» ապահովելն է եւ դրանով հասարակական-քաղաքացիական գոլորշին բաց թողնելը:

Սա ազդակ է, որ ենթադիտակական մակարդակով հասնում է հասարակութեան իւրաքանչիւր գիտակից անդամի: Վերջինս տեսնում է, որ ինչ-որ գործընթացներ տեղի են ունենում, սակայն չի կարողանում հասկանալ՝ ինչին են ուղղուած, որտեղ են տանում եւ ի վերջոյ որն է այս խաղի իմաստը: Իսկ դրանից օգուտում է բացառապէս իշխանութիւնը: Ընդդիմութեան եւ հասարակութեան թուացեալ համախմբման այս ինքնախաբէութեան թելերով իշխանութեանը պարզապէս հսկում է իրավիճակը, այն պահում վերահսկելիութեան սահմաններում: Այս փուլում դրանից աւելին իշխանութեանը հարկաւոր էլ չէ:

«ՀԱՅԵԼԻ»

### ԱԶԵՐԻՆԵՐԻ ՈՍԿՈՒ ՓԱՅԼՆ ԷԼ ՍԵՒ Է

Շարունակում է 7-էն

է, որ Ատրպէյճանն էլ չի ուժեղանում: Այնպէս որ, լաւ կը լինէր ռազմական հռետորաբանութեանը գոռ տալուց առաջ, ազերիները երբեմն յիշէին, թէ ժամանակին որքան փոքրաթիւ ուժերով է հայկական կողմը չէտ մղել ատրպէյճանական մեծաթիւ ու լաւ զինուած ստորաբաժանումներին: Երեւի չեն

ուզում. մեծ ցաւ է յիշելը: Յիշէին, Յունուարի 19-ի լոյս 20-ի գիշերը նրանց դիվերսիոն խումբը սաղրանքի չէր դիմի, հատելով հայկական սահմանը, որի ժամանակ «դիրքում կանգնած, ինը հոգուց բաղկացած հասարակ ստորաբաժանումը ետ է մղել Ատրպէյճանի յատուկ նշանակութեան ստորաբաժանման երկու խմբի՝ շուրջ 30 հոգու»:

ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ

### ԱՐՈՒԵՍԻ ԳԵՐԱԶԱՆՑ ԲԽՈՒՄ

Շարունակում է 8-էն

նուազակցութեամբ ելոյթ ունեցաւ՝ վաչէ Մանկրեանը վարպետութեամբ եւ ապրումով նուագելով Առնօ Բաբաջանից եւ Կոմիտասից երաժշտական կտորներ՝ արժանանալով հանդիսականների բուռն ծափերին: Հանդիսավարը շնորհակալութիւն յայտնեց գրքի հրատարակութեան հովանաւոր՝ պրն. Պետրոս Սամուէլեանին եւ բոլոր սատար հանդիսացողներին: Պրն. Արամ Սամուէլեանը արտայայտուեց եղբոր փոխարէն, նա բացակայում էր:

Այնուհետեւ Գլենդէյլի գրադարանների հայկական բաժնի պատասխանատու՝ Էլիզաբեթ Նազարեանը ներկայացրեց ընծայուած պատուազրերը պետական անձերի կողմից ի գնահատանք Սիրունի արուեստի ըստ հետեւեալի՝

- US Congressman- Mr. Adam Schiff
- CA State Senate- Mr. Carol Liue
- CA Legislature Assembly Member- Mr. Adrin Nazarian
- CA Legislature Assembly Member-Mr. Mike Gatto
- City of Glendale Council member-Mr. Frank Quintero

Գինեձօնի արարողութիւնը տեղի ունեցաւ սեղանի շուրջը բոլորած յարգելի անձնաւորութիւններով ներկայութեամբ սայլակին բազմած գրքի հեղինակ Սիրունի: Հիւանդութեան պատճառաւ անբարբառ վարպետը վարդահայեաց ժպիտը դէմքին գոհունակութեան եւ ուրախութեան արտայայտչական նշաններով շնորհակալութիւն էր յայտնում, յուզիչ էր պահը, սակայն ոգեւորիչ հայ մշակույթին պատիւ բերող Սիրունի պարգեւած հրաշալի աշխատանքի

### ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԶՕՐԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԲ

Շարունակում է 1-էն

հազար մուճակահարներ եւ 20,000ի հասնող խմբակներ իրարու դէմ կը կռուին, 70ի հասնող եկեղեցիներ եւ 1500 մզկիթներ վնասուած են, ինչպէս նաեւ 3 միլիոնի հասնող շէնքեր եւ հիւանդանոցներ: Երկրէն ներս կ'ապրին 1 միլիոն 300 հազար քրիստոնեաներ, որոնց 400 հազարն արդէն գաղթած է: Արմաշ Սրբազան շնորհակալութիւն յայտնեց սուրիահայ գաղութին եղած օժանդակութեանց համար, որոնց կարիքը կ'աւելնայ օրէ օր:

Ելոյթներ ունեցան Առաջնորդ Յովնան Սրբազան եւ Մուշեղ Արք. Մարտիրոսեան, ինչպէս նաեւ Սուրիահայութեան Օժանդակ Մարմնի ատենապետ Զաւէն Խանճեան: Բոլորն ալ կոչ ուղղեցին ներկայ հասարակութեան միասնական ճիգերով ներդրում կատարելու եւ օժանդակելու սուրիահայ մեր հայրենակիցներու անմիջական կարիքներուն

Սոյն զօրակցական հաւաքն աւարտեցաւ ներկայ հոգեւորականներու «Հայր Մեր» Տէրունական աղօթքով:

### ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐԽԻՒՆԵՐԸ

Շարունակում է 8-էն

կան հայոց մասին 1897-1968 թուականներուն: 1914-1920 թուականները ընդգրկող երեք տոմարներէն միայն մէկը տեսած էր, իսկ միւս երկուքը անգտանելի կը մնային: Անցաւ իստեցաւ Առաջնորդարանի արխիւներու մէկ կարեւոր հատուածին անմիջապէս վիճակին մասին: Ապա յարգարժան դասախօսը նշեց Բարեգործականի յարաբերաբար աւելի ինամքով պահուած արխիւներուն մասին, որոնք կը պարունակեն հազարաւոր փաստաթուղթեր վերապրողներու մասին:

Դոկտ. Շէմմասեանը մանրակրկիտ կանգ առաւ Երուսաղէմի արխիւներուն վրայ, որոնք փաստօրէն կոստանդնուպոլսոյ արխիւներն են, 1913-1916 եւ 1919-1922 թուականները ընդգրկող: Իսկ երկու թուականներու միջեւ գոյութիւն ունեցող երեք տարուան բացը հետեւանք էր Ամենապատիւ Տ. Զաւէն Պատրիարք Տէր Եղեայեանի քարտին՝ օսմանեան կառավարութեան կողմէ: 1919-ին վերադառնալով Պոլիս Զաւէն Պատրիարք կը ստեղծէ տեղեկատու դիւան մը, որ բազմաթիւ տեղեկութիւններ եւ փաստաթուղթեր կը հաւաքէ Թուրքիոյ տարբեր գաւառներէն, կապուած ցեղասպանութեան հետ: 1922 թուականին, Քեմալական թուրքերէն զգուշանալով, Պատրիարքը խոհեմութիւն կը ցուցաբերէ, ու այդ արխիւները փրկելու նպատակով 24 տուփերու մէջ զանտնք փոխադրել կուտայ Անգլիոյ Manchester քաղաքը, Գրիգորիս Եպս. Պալաքեանի մօտ: Իսկ երբ Գրիգորիս Սրբազան կը դառնայ Մարսիլիոյ Առաջնորդ 1927ին, 1938 թուին շուրջ 20.000 հաշուող այդ փաստաթուղթերը կ'ուղարկէ Երուսաղէմ՝ Թորգոմ Պատրիարք Քուշակեանին: Այս արխիւներու հիմնական պարունակութիւններն են Սահակ Բ. կաթողիկոսի եւ ձեմալ փաշայի թղթակցութիւնները, Թուրքիոյ տարբեր նահանգներէ եկած տեղեկութիւններ եւ փաստաթուղթեր Զարդին մասին, հայ դաւաճաններու մասին, ազգային ժողովներու արձանագրութիւններ, պարբերաթերթեր, եւ այլն:

Գալով Անթիլիասի Ս. Աթոռին արխիւներուն, անոնք ակնկալուածէն աւելի նուազ եղած էին, վեհափառ Սահակ Բ. իրապայեան կաթողիկոսի Երուսաղէմ աքսորուած ըլլալուն պատճառով: Յարգարժան դասախօսը ուսումնասիրած էր այդ արխիւները, որոնք դժբախտաբար մեծաւ մասամբ ըլլալով կրկնօրինակներ (copy), որոշ չափով անընթեռնելի եղած էին:

Ապա դոկտ. Շէմմասեան մանրամասն կանգ առաւ Բերիոյ Թեմի հարուստ արխիւներուն վրայ՝ որոնք ինամքով պահուած էին: 2000 թուականին Տ. Մուշեղ Ա. Արքեպիսկոպոս Մ ա Ր տ ի Ր ո ս ե ա ն ի ինդերանքով, Սուրէն Արք. Քաթարոյեան սիրով տրամադրած էր այդ արխիւները դասախօսին՝ զանոնք ուսումնասիրելու համար Առաջնորդարանի ժողովարարահին մէջ: Դոկտ. Շէմմասեան մանրամասն տեղեկութիւններ տուաւ այդ հարուստ արխիւներու մասին, որոնք կը պարունակէին լայն տեղեկութիւններ Չարդի, աքսորի, որբանոցներու, գաղթականացաններու վերաբերեալ, վերապրողներու ցուցակներ, ինչպէս նաեւ մանրամասն տեղեկութիւններ 40-45 Հայրենակցական միութիւններու կողմէ: Ապա յարգելի դասախօսը հակիրճ ակնարկ մը նետեց Վիեննայի, Փարիզի, Միացեալ Նահանգներու, ՀՅԴ-ի եւ Հ.Օ.Մ.-ի արխիւներուն, որոնք կու գային լրացնելու Միջին Արեւելքի արխիւներուն տուեալները: Հուսկ դասախօսը կանգ առաւ արխիւներու ու անոնց ինամքով պահպանման կարեւորութեան վրայ: Ան մեծ սիրով պատասխանեց ունկնդիրները յուզող հարցերուն: Դասախօսութիւնը վերջ գտաւ Տ. Ղեւոնդ քնն. Քիրազեանի պահպանիչով:

Անկասկած, Միջին Արեւելքի արխիւներու այս ուսումնասիրութիւնը, Հայաստանի եւ այլ կեդրոններու արխիւային տուեալներուն հետ միասին, պիտի դառնան փաստագրական անհերքելի ապացոյցներ, խթանելու եւ հետապնդելու ցեղասպանութեան ճանաչումն ու մեր արդար իրաւունքներու հատուցումը:

արգասիքով, նրա անունը յաւերժ հնչեցնող: Ծրագրի աւարտին հանդիսավարը ընթերցեց մեծարեալ հեղինակի շնորհակալական խօսքը՝ ուղղուած ներկայ հանդիսականներին եւ բոլոր նրանց, ովքեր տարբեր առիթներով օժանդակել եւ օգտակար եղած են, նաեւ իր կեանքից, նկարչական արուեստից, աշխատանքներից դրուագներ ներկայացնելով, այնուհետեւ ներկաները հրաւիրուեցին հիւանդարկութեան:

Միջոցառումը շեղմ էր, սակայն յուզումով թաթախուած: Շատեր մօտենում էին հեղինակին, շնորհա-

կալութիւն յայտնում, առողջութիւն մաղթում եւ նկարում էին անմոռանալի դարձնելով պահը եւ երեկոն իրենց կեանքում:

Այսպէս երեկոն իր աւարտին հասաւ:

Ապշանքի եւ հիացմունքի երեկոյ: Խոկումի եւ մտածումի երեկոյ: Հպարտանքի եւ գովաբանութեան երեկոյ:

Հանդիսականներից ոմանք լիքը ձեռքերով էին լքում սրահը հեղինակի գրքերը գնած լինելով որպէս թանկագին յիշատակ նրա կեանքից ու արուեստից:

«ՀԱՅ ԿԻՆԸ ԵՒ ՄՇԱԿՈՅԹԸ»

Շարունակուած էջ 15-էն

1909ին կարեւոր հրատարակութիւն կ'ըլլայ «Աղջկայ մը սիրտը» հատորը ուր պատմուած քննարկով կը ցոյցանէ գրքին մէջ տեղ գտած հերոսներու նկարագիրը, կեանքին նայելու չափն ու արժեւորումը:

«Կնոջ հոգիներ» արձակ հատորին մէջ կեանքէն առնուած պատմուածքներուն մէջ կը գործեն դրական եւ ժխտական տիպարներ:

Միպիլի գրական եւ հասարակական կեանքի վաստակը զինք կը դարձնեն եզակի կին մը Պոլսոյ հայ կեանքին մէջ:

70 տարեկանին կը մահանայ 1934-ին իրեն համար ծրագրուած յոբելեանը առանց վայելելու:

Միպիլի բովանդակ կեանքը նուիրուած էր հայութեան հանդէպ իր խոր սիրոյն:

ԴՈԿՏ. ՓՐՈՖ. ԲԵՐԿՐՈՒՆԻ

Սիրելի Ազատուհին 139-154 էջերուն մէջ ընթերցողին կը ներկայացնէ դոկտ. փրոֆ. Բերկրուհի Նաճարեան-Սվաճեանի կեանքը, նկարագիրը, ուսումնական ծրագիրներով ձեռք բերած բարձրագոյն որակաւորումները Լիբանանի թէ Ամերիկայի մէջ: Ան նշանաւոր հոգեբաններու եւ մանկավարժներու հետ ունեցած է գործակցութիւն, եւ այդ բոլոր մակարդակներու մէջ, որպէս հայուհի մտաւորական, ինքզինք արժեւորելով, վայելած է բոլորին յարգանքը:

Երբ կարդացի Բերկրուհիին նուիրուած էջերը յիշեցի ժողովրդական ասացուածքը՝

«Երբ Աստուած իր մատով կը դրոշմէ ծնող մանուկին ճակատը, ան անպայման կ'ըլլայ հանճար, գիտնական, առաջնորդ-անհատականութիւն:

Կը կարծեմ որ Բերկրուհիին ստացած է այդ յատուկ, տիրոջը մատին դրոշմը իր ճակատին, դարձած է տիպարը մեր սիրելի Ազատուհիին եւ զինք ճանաչողներուն: Ազատուհին կը գրէ՝

«Աշխատանքի հերոս յորջորջումը կը պատշաճի իրեն, երբ նկատի ունենանք իր կեանքին 50 տարիներու անընդհատ յիշուած եռուն գործունէութիւնը, հեւ ի հեւ վազը, գիտութեան եւ ազգային ծառայութեան փշոտ ու դժուար ճանապարհին վրայ»:

Վարձքը կատար կ'ըսենք, բոլոր օրինակելի կեանքով տիպար դարձած մեր հայուհիներուն:

ՀԱՅՈՒՆԻ ՏԻՊԱՐ ՄԸ ՍԻՐՎԱՐԴ ՀԱՆՆԵՍԵԱՆ

Սիրելի Ազատուհին, Սիրվարդը մօտէն ճանչցած ըլլալով, գայն կ'արժեւորէ որպէս տիպար մայր, խոհեմ, աշակերտ, շրջահայեաց, զգայուն եւ ծառայատէր հայուհի:

Անոր մահուան տարեկիցին, իր հարգատի զգացումները արտայայտելով ըսած է.

«Սիրվարդ իր բարոյական տիպարով մեզի օրինակ կը հանդի-

սանայ: Իր կեանքին ընդմէջէն մենք վերահասու կ'ըլլանք այն արժանիքներուն, որոնք կը շարունակեն ապրիլ եւ ազդեցութիւն գործել մեր շրջապատին վրայ մահուանէ ետք իսկ:

Ան իր ամուսինին՝ Կարապետի եւ զաւակներուն ասպարէզով մօտէն կը հետաքրքրուէր: Ան իր կարեւոր ներդրումը ունէր անոնց յաջողութեան մէջ: Ծիրակ երգարաններուն անխափան հրատարակութեան թիկունք կանգնելով, կը նպաստէր, որ հայ երգը մտնէ իւրաքանչիւր հայ տունէն ներս»:

ԱՂԱՒԻՆԻ ԾՆՈՐՀ ՊԱՇՏՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ազատուհին իրապաշտութեամբ, ընթերցողին կը ներկայացնէ, Աղանի Ծնորհը, որպէս Տիպար Քրիստոնէական դաստիարակութեամբ սերունդներ պատրաստող ուսուցչուհի, Լիբանանի եւ Ամերիկայի մէջ:

Ինծի համար, Աղանիին սէրը իր քրիստոնէական հաւատքին միացած, սէրը իր ասպարէզին հանդէպ, սէրը մարդուն մէջ մարդը կերտելու առաքելութեան տիպարը եղած է Ծնորհը իր ողջ կեանքի ընթացքին:

Իր կանխահաս մահը զինք իսկեց իր սիրելիներէն:

Աղանին պարզ ու խոնարհ հոգիի տէր էր:

ՀԱՅ ԿԻՆԸ ԵՒ ՄՇԱԿՈՅԹԸ

Սիրելի Ազատուհին 9-22 էջերուն շնորհակալ աշխատանքով, ընթերցողին ներկայացուցած է հայ կնոջներուն մասին փոխանցել հայ կնոջ անցեալի իրագործումները, երբ Եւրոպայի մէջ կ'ընէր կ'ապրէր կաշկանդուած ու սահմանափակ կեանք մը որ այդ շրջանին:

Ըստ Ղազար Փարպեցի պատմիչին, Հմայեակ Մամիկոնեանի կինը Ջուլիկ Արծրունին կը նկատուէր բարձր մտաւորական: Ծուշանիկ, Վարդան Մամիկոնեանի աղջիկը՝ ընթերցասէր, իմաստուն:

ԺԳ. դարուն Գանձակեցիին կը վկայէ Մամբան իշխանուհիի մասին, որուն դուստրը, Մամա խաթունի խնդրանքով վարդապետը, Երզնկացիին «Յաղաքս Երկնային Շարժմանց» գրութիւնը հայ մտքի համար անգնահատելի աշխատանք կը նկատուի: Վասպուրականի Գագիկ Արծրունի թագաւորին տիկինը, 902 թուականին, ընդօրինակել տուած է Աւետարան մը, որ հնագոյն ձեռագիրը կը նկատուի, եւ իր մանրանկարչական արուեստի բարձր մակարդակով, իսկական գոհար մըն է:

Կիլիկեան շրջանէն, Ջապէլ թագուհին իր գեղարուեստի եւ դպրութեան հանդէպ ունեցած սիրով նշանաւոր եղած էր:

ԺԱ. դարուն Բագրատունեանց տունէն Աշոտ թագաւորի դուստրը Մարիամ հմուտ գիտնական էր: Գրասէր եւ գրող հայուհիներէն բացի կայ գրչագիրներու եւ ձեռագիրներու օժանդակող աղջիկներ:

Տաղանդաւոր երաժիշտ եւ բանաստեղծ էր Սահակադուլիս: Իր քրոջ հետ միասին կ'ընէր իր արտադրանքները: Իր արտադրանքները կ'ընէր իր քրոջ հետ միասին: Իր արտադրանքները կ'ընէր իր քրոջ հետ միասին:

Շարունակուած էջ 15-էն

ցոյի կեանքէն հեռու, Սօսեաց անտառներուն մէջ մարտական հմտութեանց այլուքներ կ'ուսուցանէր իշխանական ծագում ունեցող իր աշակերտներուն:

Ահա թէ ինչ ուսուցողական տողեր գրած է մեր Պատմահայրը: Տողեր, որոնք այսօր ալ նոյնքան արդիական կը մնան.

Պատմատալի մէջ գլուխ բարձրացուցած էին կեդրոնախոյս նախարարները: Արքունիքի համար առանձնապէս մեծ վտանգ էր մայրաքաղաքի մէջ հակապահուծ ու հարստութիւն կուտակած քրմա-

նաստեղծ էր Սահակադուլիս: Իր քերթուածն է, «Սրբուհի Մարիամ Սափոր Ոսկի» շարականը որ հասած է մեզի:

10-րդ դարուն Խոսրովանոյշ թագուհին, Աշոտ Ողորմածի տիկինը կը հիմնէ Սանահինի եւ Հաղբատի համալսարան վանքերը: Ծահանդուխտ Սիւնեաց թագուհին որպէս շինարար կը հիմնէ Տաթևի վանքը:

Կատարինէ թագուհին կիսատ մնացած Անիի Մայր տաճարը աւարտին հասցնելու համար, իր օժիտները կը ծախէ, որ հոգայ Տաճարին ծախսերը:

Անիի աւերակներու նկարագրութիւնը ընելով, Լինջ անգլիացի տաղանդաւոր ճանապարհորդը կը գրէ.

«Կը գտնուինք գեղարուեստական բարձր արժէք ներկայացնող յիշատակարանի մը դէմ, որ յայտարար է քաղաքակրթական մշակոյթի աստիճանի մը, անհամեմատ աւելի բարձր քան իրեն ժամանակակից արեւմտեան չափանիշը»:

Օտար համալսարաններու հայ ուսանողուհիներէն ոմանք, իրենց աշխատանքով կը ներկայացնեն հայ մշակոյթի արժէքները, համալսարանական խստադատ ատեաններուն, որպէս աւարտաճառ կամ թէգ: Այս աշխատանքներով հայ մշակոյթը կը ծանօթացնեն օտարներուն:

Հայ կնոջ դերը մայրենի մեր ոսկեդարի լեզուի պահպանման եւ փոխանցման տեսակէտով նոր սերունդին, մեծ պարտաւորութիւն է: Ազատուհին այսպէս կը վերջացնէ:

կան դասը՝ Քրմապետ Արձանի գլխաւորութեամբ, որոնք յաջողած էին իրենց ենթարկել կամագուրկ Հարմա Արքան ու անոր արքունիքը:

Երիտասարդ Արամը կը բեռնաթափէ արքունիքը: Ան նախ կը չէզոքացնէ արքունիքին շուրջ վիտացող ճրիակեր ու արքունիքի կերակրատաշտէն լիուլի օգտուող մօտ ու հեռու զարմիկներուն դիմադրութիւնը, ապա զանոնք բանակի այս կամ այն գործաւորման մէջ ընդգրկելով, կը պարտադրէ իրենց միտքի եւ ուժի ունակութիւնները ռազմի դաշտին մէջ ի ցոյց դնելու...

-Հայուհին իր սեռին վայել արժանապատուութեամբ, եւ որպէս արժանաւոր յաջորդ իր նախնիներուն, պիտի դիմակայէ իրեն վստահուած մեծ պատասխանատուութիւնը, հայ մշակոյթը չաւերժացնելու սահմանող համագրային ճիգերուն մէջ:

\*\*\*\*\*

Հայ կինը եւ Մշակոյթը հատորը հարուստ է նաեւ միջազգային արժէքով հայ թէ օտար գրագէտներու, արուեստագէտներու մասին, հայերէն եւ անգլերէն լեզուներով գրուած յօդուածներով: Կարժէ կարգալ բոլորը:

Ազատուհին սրտաչոյզ երախտագիտութեամբ կը յիշէ նախակրթարանի ուսուցչուհին, Մաքրուհի Թաթևեանի խաչատուրեանը, եւ երկրորդական վարժարանի հայերէն լեզուի ուսուցչուհի Մանուկ Տէօլլի-Թեանը նուիրուած յօդուածներով:

Գրուած ներբողագիրները կ'ապացուցեն իր նկարագրին ազնուականութիւնը համեստութիւնն ու բարի հոգին:

Ան՝ որպէս համալսարանի վաստակաւոր դասախօս, ընթերցողին կը թելադրէ,

Ա.- Որքան ալ բարձր տիտղոսներու արժանանաք, ուսումնական թէ արուեստի ասպարէզներու մէջ, չմոռնաք ձեր առաջին ուսուցիչ-ուսուցչուհիները:

Բ.- Գիտնաք արժեւորել արժանին՝ իր կեանքէն հեռանալէն առաջ, որ բոլորիս ճամբան է: Անոր պարգեւեցէք իր շնորհակալ գործէն եկող գոհունակութիւնը, որպէս գնահատանք:

**VA Print Media**  
 Book Printing • Hard Covers • Year Books  
 Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ Հին Գիրքերու Նորոգութեան Համար Հեռ.աձայնել՝ ՎԱՀԻ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ



**Vahe Atchabahian**  
 1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104  
 Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924  
 vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**  
 1060 North Allen Ave Pasadena, CA 91104  
 Գրասենեակները վերանորոգուած  
 եւ յարմար վարձքերով  
 հեռ.աձայնել՝ (626) 398-0506

